

Hentchak:

Organe Central

DU PARTI

HENTCHAKISTE.

ՀԱՅԱՍՏԱՆ

Journal Arménien

mensuel

XIX Année

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՕՐԳԱՆ ՀՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ՀՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Հնչակեան կուսակցութեան գերը ահագին է եղած հայ կեանքի մէջ. առանց չափազանցելու կարելի է ասել, որ մեր նորագոյն մտաւոր կեանքի կանոնաւորողը նա է եղել: Հնչակեանութեան քարոզած այն մտքերը՝ որոնք երբեմն անմարտելի և վտանգաւոր էին համարուած ու զրա համար էլ հնչակեանները հայաժանքի ենթարկուած, այժմ այդ մտքերի մեծ մասը հայ ժողովրդի սեպհակեանութիւնն են դարձել և նրա ընթացիկ կեանքի մղիչ գաղափարները կազմել:

Հաւատարիմ իր ռազմիրայի գերին, Հնչակեան մամուլը վերջերս մի կարգ նորագոյն խնդիրների մասին թեր ու գէտ դրութիւններ հրատարակեց: Որովհետեւ այդ խնդիրները զեռնիւթ են մատակարարուած մեր օրինական և ոչօրինական մամուլին և որպէսզի որ և է թիւրիմացութեան տեղի չտրուի, կուսակցութիւնս սրբանով պարզում է իր զիրքը՝ համաձայն իր Ա. Պատգամաւորական ժողովի որոշումներին: Առաջին կարծողներ ու պնդողներ եղել են, ու զեռ կան, որոնք այն համոզումը ունին թէ ամառ-կա-հայրական Վատը (Հայրական Խնդիր) պէտք է թողնել: Պատճառ: — Որովհետեւ քաղաքական հանգամանքները այժմս բոլորովին աննպաստ դարձուածք են առել այդ Խնդրի բարեյաջող լուծմանը համար և, բացի զրանից, Օսմանեան Պետութիւնը կարծուածից աւելի զօրեղ դուրս եկաւ, ու զրա հետ միասին 18-20 տարուայ իր մաքառումով տաճկա-հայր պարզապէս ցայց տուեց, որ ինքը ո՛չ միայն պահանջուած յեղափոխական գիտակցութիւնը չունի, այլ և չունի նիւթական և բարոյական այն ոյժը, որ անհրաժեշտ է մի յեղափոխուող ժողովրդի համար. իսկ վերջին դէպքերի ազդեցութեան տակ նա այժմ բոլորովին սպառուել է ու նրա Վատը պիտի թողնել — այսպէս են պնդում, փաստում շատ շատերը: — Հնչակեան կուսակցութեան զիրքը՝ խնդրի այդ կէտի նկատմամբ անփոփոխ է: Մեր

համոզումն է, որ վերեւ արուած թէզը բոլորովին մակերևութային է, հիմնուած ոչ թէ փաստերի և իրողութիւնների վրայ, այլ այդ բոլորը արդիւնք է անհատական՝ ենթակայական սխալ հայեցակէտերի: Եթէ Արեւելեան Խնդրով շահագրգռուող պետութիւնների մէջ այս օր ընդհանուր համաձայնութիւն և ներդաշնակութիւն չեկայ տաճկա-հայրական Խնդիրը սուրի ծայրով կամ այլ միջոցներով առաջ քաշեցնելու, անդամանելի ազդեցութիւն և յանդգնութիւն կը լինէր ենթադրելն անդամ թէ վաղն էլ այդպիսի բարեյաջող պայմաններ չեն ներկայանալ: Այլի առաջ ունենալով Արեւելեան Խնդրի էութիւնը և այն բոլոր յարակից խնդիրները՝ որ նրա հետ են կապուած, մենք փաստահար ենք որ Արեւմտական Մեծ Պետութիւնները այդ Խնդիրը անպատճառ ձեռք պիտի առնեն՝ վաղ թէ ուշ, և պիտի աշխատեն նրան արմատական լուծում տալ, ու այդ մեղ ասում է պատմութիւնը և քաղաքակրթութեան հոսանքը, և զրա համար էլ որ ոչ միայն ո ձ ի ր է այդ Խնդիրը բարձիւթողն անելը, այլ և բացարձակ դատաւարականութիւն, եթէ այդ Խնդրին պահանջ ու զ ու շ ա զ ր ու թ իւ ն ը չտրուի ու պէտք եղած միջոցներով չաշխատուի նրա լուծումը փութացնել, որքան որ դա կախումն ունի մեր Յեղափոխական Ոյժերից: Իսկ թէ տաճկա-հայ ժողովուրդը յեղափոխական գիտակցութիւն չունի, նա այժմ բոլորովին սպառուել է և այս ու այն կողմ շարժուելիք բեկոր է դարձել — դա այնպիսի մի տղայական մտածմունք է, որի դէմ ամեն լոպէ կարող է բողոքել տաճկա-հայի վերջին 25-30 անարուայ պատմութիւնը: Հնչակեան կուսակցութիւնը համոզուած է՝ որ տաճկա-հայր ունի այն բոլոր յատկութիւնները, որոնք անհրաժեշտ են մի յեղափոխուող ժողովրդի համար, ուստի ինքը պիտի շարունակէ ընթանալ իւր իսկ բացած ճանապարհով մինչև վերջ, մինչեւ և ի ր ծրար դ ր ի ս պ առ ու մ ր, մ ի ն չ եւ ի ր ծ ր ա դ ր ի մ ի ա հ ե ծ ա ն ա է ր ը լ ի կ ա - հ ա յ ի ի ր մ ի ա հ ե ծ ա ն ա է ր ը լ ի ն ե լ ը թ է ք ա ղ ա ք ա կ ա ն ա պ է ս ե լ թ է

տ ն տ ե ս ա պ է ս:

Երկրորդ՝ զանազան թափթփուքներ, ումանք էլ Հնչակեան շարքերից դուրս թափուածներ, այն կարծիքն ունին թէ Տաճկա-Հայկական Վատի զուտ ազգայնական է, ուստի՝ այդ Խորհրդով պարտադրները ազգայնականներ (նացիօնալիստներ) են: Այդպիսիների հայեացքով Տաճկա-Հայկական Վատը համանիշ է նացիօնալիզմի, ուրեմն և, հետեցնում են այդ քաջերը, ոչ միայն սօցիալիստները՝ մանաւանդ Սօցիալ-Վեմօկրատները՝ այնտեղ գործ ունենալ չեն կարող, այլև իրենց կարողութեան սահմանների մէջ պիտի աշխատեն որ անխառն սօցիալիստները հեռու մնան այդ Խորհրդից և նրան ոյժ չտան:

— Հնչակեան Կուսակցութեան համար այդ կարծիքը նոյնպէս սխալ է, և հիմնովին սխալ: Նացիօնալիստները և նացիօնալիստական ձև ու բնաւորութիւն ունեցող քաղաքական կուսակցութիւնները՝ Արեւմտեան Աւրոպայում՝ ընդունում են՝ 1) ընկերութեան մի դասակարգի տիրապետութիւնը միւսի վրայ, 2) Տիրապետող (չահագործող, դործաւոր, պրոլետար) դասակարգին գործիք դարձնելով՝ նրան մղել զէպի արտաքին աշխարհակալութիւն տիրապետողի շահերի տեսակէտից, 3) Ընդունել ազգերի կեանքը, պատմութիւնը որպէս կենդանական կռուի յարատեւող մի պրոցեսուս և, ուրեմն, ուժեղի, հզօրագոյնի տիրապետութիւնը թողի վրայ: Իրաւունքը ոյժն է— ահա նրանց նշանաբանը: Նացիօնալիստները ամեն տեղ կամ կայսերականներ են կամ ունին համա մասնիկը (համագերմանականներ, համաաւստրականներ), կամ Տաճկա-Հայկական Վատի մէջ այդ բնաւորութիւնը կրող մի զիծ անգամ: — Ինչու երբէք Վաղաքականապէս ազատ, անկախ Հայրենիք ունեցող մի Վեդ, մի Ժօրէս . . . Գրանսիայում, մի Իէթէլ, մի Իերնշտայն . . . Վերմանիայում, մի Լէրիկօ Ֆէրրի . . . Խաւիայում՝ երկար տարիներից ի վեր կրկնում են և առիթը ներկայացած ժամանակին միշտ էլ յայտարարում, որ եթէ մի օր մի արտաքին ոյժ իրենց պատկանող երկիրը խուժէ, ապա առաջինը իրենք կը լինէին զէնքը ձեռքին սահմանադուրս վազողը և առաջին զինվակ արձակողը: Մարքսի մեկնաբան Կ. Կառլսկին որոշ կերպով ասաց որ նուաճող ժողովուրդները լիակատար իրաւունք ունին իրենց անկախութիւնը ձեռք բերել և այդ պարագային նոյն իսկ պրոլետարիատ դասակարգը կարող է միանալ ուրիշ տարրերի, օրինակ բուրժուազիայի՝ հետո՝ Իողոր երկրների, յայտնի սօցիալիստները առանց

որ և է վերապահութեան ընդունում են, որ ապագայ սօցիալիստական աշխարհի ներդաշնակութեան համար՝ ազատ, անկախ հայրենիքների, ապա, անկախ ժողովուրդների գոյութիւնը և ինքնուրոյնութիւնը բացարձակ անհրաժեշտութիւն է: Սօցիալիզմ չկայ և չի կարող լինել այնտեղ, ուր կան նուաճող ժողովուրդներ, այդ նոյնը կը լինէր, եթէ ասուէր թէ սօցիալիզմը հընարաւորութիւն է այնտեղ, ուր կողք կողքի կարող են ապրել կապիտալիստ և դործաւոր դասակարգերը: Անցեալ տարի Տրիէստի մէջ կայացած Սօցիալիստական համագումարը պարզ կերպով որոշեց թէ ինչ է ազգայնութիւն (նացիօնալիզմ) բուրժուական հասկացողութեամբ և ինչ՝ սօցիալիստական հասկացողութեամբ: Նացիօնալիզմի սօցիալիստական հասկացողութիւնը իրեն բնաւ համամիտ և կողմնակից չի համարում ազգերի ձուլուելուն կամ ջնջուելուն. նա ճանաչում է «Ազգային Իրաւունք», այսինքն այն որ ամեն ազգ իրաւունք ունի իր միահեծան տէրը լինելու, իր ինքնուրոյնութիւնը, իր անհատականութիւնը ունենալու. «Ազգայնական Իրաւունք» նոյնն է համաշխարհային թատերաբեմի մէջ, ինչ որ անհատական իրաւունքը ընկերութեան մէջ: Ամէն երկրի մէջ Սօցիալիստական կուսակցութիւնների անմիջական նպատակն է քաղաքական իշխանութիւն ձեռք բերել, որպէսզի այդ միջոցով շուռ տան տիրող դրութիւնը և որոշեալ հայրենիքի մէջ ամփոփուած ազգին ոչ միայն միահեծան տէր դարձնեն քաղաքականապէս, այլև տնտեսապէս: Ու դրա համար էլ ամէն երկիր տալիս է իր ուրոյն տաքսիկան, իր ատաղձը, իր տարրը: Ինչ է ասում Հնչակեան կուսակցութիւնը, նրա նպատակն է քաղաքական իշխանութիւն ձեռք բերել դասակարգային տիրապետութիւնը յաւելրժացնելով և աշխարհակալական արկածախնդրութիւնների մղելու, թէ՞ հայ հայրենիքի մէջ եղող ժողովուրդին իր քաղաքական և տնտեսական միահեծան տէրը դարձնելու: Աւգա դեռ իր շատ հեռաւոր նպատակն է, քանի որ Տաճկահայը ներկայումս ոչ միայն այդ հեռաւոր նպատակին հասնելու քաղաքական որ և է հաստատութիւն չունի, այլ նա գրուած է մի ահուելի բնաջնջումի առաջ: Նրան զլացում է գոյութեան տարրական իրաւունքը, դատաւարտելի պիտի լինէր նրա ձգտումը՝ որպէս նացիօնալիզմ՝ ունենալու այն, ինչոր ուրիշները արդէն ունին կամ ունենալու յետեւից են:

Եթէ Տաճկա-Հայկական Վատը զուտ նացիօնալիստական լինէր, ընդունելով այդ տերմը իր ընթացիկ առումով, այն ժամանակ միջազգային Սօց. Կոնգրէսները այնքան մօտիկ համակրանք

չէին տաճիլ զէպի նա: Իսկ հարիւրաւորներն է հասնում թիւը այն Սօցիալիստներին, որոնք համոզուած պաշտպաններն են Տաճիկ-Հայ Վատին, և նրանք այդ անելով շատ լաւ դիտեն, որ իրենք ոչ թէ մի նացիօնալիստական գործի են ոյժ տալիս, այլ սօցիալիստական: Ժիւլ-Ռօշը և իր նման շատ շատերը Տաճիկ-Հայիական Վատը վերլուծելով՝ եկել են այն եզրակացութեան, որ հայ ժողովուրդը՝ ընդհանրապէս և այդ Վատի պաշտպանները մասնաւորապէս՝ ապագայ Սօցիալիստական աշխարհի ռազմերան են հանդիսանում մերձաւոր Եւրեկքի մէջ:

Երբորդ՝ Ռուսաստանի մէջ գտնուող հալութեան մի մասը գտնուում էր ձիշդ այն ձըն-շումների տակ, ինչ որ էր նրա միւս մասը Տաճիկաստանում: Հնչակեանութիւնը չէր կարող անտարբեր հանդիսատես լինել՝ երբ մի ժողովրդի սպանման գործի առաջն էր կանգնած և նա սկսեց իր կռիւն Յարիզմի դէմ, ու այդտեղ հէնց սկզբից մենք կանգնեցինք Սօցիալ-Վեժմօկրատական հողի վրայ: Սօցիալիստական միջազգային կօնգրէսներին որոշումները ընդունելով միասին՝ հէնց այդ որոշումների վրայ կանգնած՝ Հնչակեանութիւնը Ռուսաստանի մէջ պահում է իր ուրոյն կազմակերպութիւնը: Նա շատ խնդիրներում համընթաց է եղած և կարող է լինել Սօցիալիստական ուրիշ կազմակերպութիւնների մասնաւոր: Ս. Վ. Բ. Կ. հետ, բայց պիտի պահէ իր ինքնուրոյն կազմակերպութիւնը, որպէս առանձին կուսակցութիւն. եթէ կան Սօցիալ-Վեժմօկրատներ որ դրա մէջ տեսնում են նացիօնալիզմ, դա արդէն ապացոյց է հէնց իրենց տգիտութեանը, եթէ չասենք որ դա արդէն փաստ է՝ թէ հէնց իրենք են թունդ նացիօնալիստները: Սօցիալիստական միջազգային կօնգրէսների բանաձևերի վրայ կեդած, մենք մեզ լիախառն իրաւունք ենք տալիս պարտաւորեցնելու՝ որ Ռուսաստանի մեր մասնաձիւղերը օգնեն և՛ Տաճիկ-Հայ Վատին, նրա էլ գործաւորը դառնան՝ ինչպէս որ առաջ: Իսկ եթէ գտնադան ռուս, հայ և այլ սօցիալիստներ մեր այդ դիրքի մէջ տեսնում են հակասութիւն, այսինքն թէ այդ կերպով մենք Ռուսաստանում Սօցիալ-Վեժմօկրատներ ենք, իսկ Տաճիկ-Հայաստանում՝ նացիօնալիստներ, — դրանով մեր այդ հակառակադիմութիւնը պարզապէս ցոյց են տալիս որ իրենք իրենց արտաքին քաղաքականութեան մէջ շատ բանով չեն տարբերում Սաւոնօֆիլներից և Կատկովներից: Թէ Ռուսաստանում և թէ՛ Տաճիկ-Հայաստանում՝ Հնչակեանութեան զիրքի մէջ չկայ հակասութիւն, երկու տեղն էլ նրա գործը սօցիալիստական է, աչքի

առաջ՝ ունենալով իր առաջադրած նպատակը, և իր զրօշի տակ համախմբած տարրերը:

Զորորդ՝ ռուսացիք սօցիալիստների բեկորները, որ երբեմն իրենց տալիս էին «միջազգային սօցիալիստներ» մակդիրը, այժմ՝ զրանցից ոմանք իրենց զգեստները փոխած՝ «հայ Սօցիալ-Վեժմօկրատներ» անունով քարոզում են որ Բուլղարիայի Ռուսմանիայի, Լադիպոտսի, Եմերիկայի . . . մէջ եղող հայ գործաւորները միանան իրենց տեղը եղող գործաւորների հետ և կռիւ մղեն տեղական կառավարութեան՝ կապիտալիզմի դէմ, — այդ կերպով հայ գործաւորը պիտի դառնար միջազգային սօցիալիստական մի ստպետ:

— Երտասահմանի մէջ եղող Հնչակեան բուլոր գործաւորները — Եմերիկայի, Բուլղարիայի, Լադիպոտսի, և այլն, — ազատ լինելով իրենց տեղի վրայ սօցիալիստական պատասխանի մղելու, նրանց գործունէութեան իսկական ակտիւ վայրն է Տաճիկ-Հայաստանը և Կովկասը, նրանց համար կայ և պիտի լինի Հայկական Վատ, նրանք այդ Վատի գործաւոր-աշխատաւորներն են:

Հինգերորդ՝ Հնչակեան կուսակցութեան համար՝ քաղաքակրթութեան զարգացման ներկայ աւտիճանին մէջ՝ կայ, գոյութիւն ունի հայ հայրենիք և հայ ժողովուրդ, և այդ այնքանով ու այն իրաւունքով, որքանով և որ իրաւունքով կայ Գրանսիա, Գրանսիական ժողովուրդ՝ Վեզլի, Ժօրէսի, Վայանի համար. Վերմանիա, Վերմանական ժողովուրդ՝ Բեքէլի, Բեքէշտայնի համար . . .

Վստահ մեր ընդգրկած գործի ճշմարտութեան վրայ, մենք առաջ կերթանք այն արիւնոտ ճանապարհով, որով ընթացել ենք մինչև ցարդ: Յարիզմի և Սուլթանիզմի աւերակների վրայ կանգնեցնել քաղաքականապէս և տնտեսապէս միահեծան հայ ժողովուրդ — Եհա այն բաժինը, որ մենք կրեւերք միջազգային սօցիալիստական խորանին առաջ:

Թ Ղ Թ Ա Կ Ց Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Գ Ա Լ ՈՒ Ս Տ Ա Ր Խ Ա Ն Ե Ա Ն

Հայ ազատագրութեան արիւնոտ, կարմիր հորիզոններուն վրայ, խիզախ ընդհարումներու, անվերջ անդադար պայքարում խոր յոյժերով ու տենչերով ապրած և ցաւադիւսօրէն տառապած մեր անդին, Գալուստը, հակառակ իր վսեմ իտէալին՝ գոռ ճակատամարտում մէջ լանջաբաց ասպսէզ գալու և իր հետքանչ

կորովի տղամարդու անհուն խանդով ու ախլանով, իր սիրտը այրող, տռչող չայ տառապանքի անհասարկ զիններուն մէջ արի ու անվիհեր կռուելու, աւաղ, հսկայատիպ ու վայելագեղ այդ տիտանը, հայ անձնուրաց անոյններու այդ հազուագիւտ տիպը, թրքական ահապատում զնտաններուն մութ, սուրբ ու սեռաշուք մթնոլորտին մէջ կաւանդէ իր մաքուր, անարատ հագին՝ մինչև վերջին վայրկեանը հարազատ իր սիրած, իր պաշտած նւիրական դատին:

Չէ՛ կարելի խոր սաբսուսով մը չը համակուիլ, չէ՛ կարելի չանդրադառնալ այն ճակատագրական վայրկեանին, պաշտելի հերոսին օրհասական այն խորհրդողաւոր, յուզեց վայրկեանին՝ երբ այլ ևս կեանքը անդառնալիորէն տեղի կուտար մահու ցուրտ ու դաժան սարսուռներուն առջև: Հերոսներու անդարձ մեկնումին՝ վերջին հրաժեշտի իրենց հանդիսաւոր վայրկեանի ճգնաժամային այս պատկերը իր մէջ աղբրապէս ու պաշտապին այնպիսի արտայայտութիւն մը ունի՝ որու հագեցնական նշանակութիւնը մեզ՝ գաղափարի կանգուն, ապրող զինուորներու համար անսահմանօրէն թելադրական է. հերոսներու ճգնաժամային այդ պատկերը կը մնայ միշտ մեր սրտին մէջ, որպէս մեծ պարտականութեան հրամայական ազդանշան՝ և նոր ոգորումներու, նոր հաւերութիւններու ներշնչարանը կը դառնայ:

Սեր անհասարկ, մեր անողոր պայքարին մէջ գալուստը եղաւ այն դէպքերէն մին, որ իրենց անբացատրելի անձնուրացութեամբ ցոյց տուին թէ ինչ գերանական, ինչ արտասովոր զոհաբերութիւններու ոյժ կայ ժողովրդի ցաւերու բողբոջ մարմնացնող, անոր իտէալին շրջակակիր եղող զինուորներու սրտին մէջ, անձնուրացութեան այդպիսի հոյակապ այդպիսի շքեղ օրինակներու յիշատակին առջև անսահման յարգանքով կը խոնարհինք և անգամ մը ևս կամրապնդենք մեր մէջ այն հաւատքը թէ այդպիսի զոհաբերութիւններու ընդունակ ժողովուրդը անպատճառ իր փայտաշած նպատակին պիտի հասնի վաղ կամ ուշ:

Գալուստը թէ և 14 հրկար տարիներ սեղմուած, ճնշուած մնաց բանտի դառնութեանց, անոր հիւժողաւորիչ աղբեցութեանցը, բայց միշտ անյողողող զինուորը եղաւ այն համոզումին թէ մահուան, արեան, կախաղաններու, բանտերու ցաւերով, դառնութիւններով է որ Մեծ Երկունքը իր վերջնական լուծմանը պիտի հասնի:

Ի՞նչ առիւծի սիրտը պարզ մահականացումներու անտեսանելի, սներեւոյթ պայծառ արևի մը տակ այնքան հզօրապէս զարգացած ու աճած էր, որ կարծես կորովի բովանդակ մարմնացումն էր բանտային տխուր, մութ տարիներու երկար շրջանին, ան վայրկեան մը չը մեղկացաւ և մեր դատին մտահոգութիւնը իր միակ մը տաժուածը եղաւ մինչև վերջին շունչը:

Որքան յաճախ ան երազեց բանտերու ահաւոր պարիսպները ձեզքել, անոր մաւր ու ժանիքոտ կամարները խորտակել, դուրս գալ դարձեալ ներշնչելու, ստեղծագործելու նոր ոյժեր. հրապարակ ասպարէզ բերելու նոր կորովներ՝ բազմաշարժար ժողովրդի աղատագրութեան անհասարկ պայքարն յառաջ մղելու համար: Ու աւաղ, այսօր իր մահու պատկերին շուրջը, քանի թախծագին է մտածել թէ ան մեռաւ սրտաբեկ՝ բանտի անշուք կամարներու տակ, վրէժներու բողբոջ սրտին մէջ, կուտ, պատուոյ դաշտին մէջ ինտ-

րու մուրաւոր չիրականացած:

Եւ մէն անգամ՝ որ գալուստի պէս կտրիճներ հոյն գիրկը կը յանձնենք. խոր վշտակիր, այո, ամեն անգամ՝ որ հայ աղատագրութեան յար ժողովուրդին հորիզոններէն կաներեւութեան այն գեղեցիկ մաքուր, հոգիները՝ որ իբրեւ պայծառ, լուսատու աստղեր հայ տառապահին կեանքի ստուերոտ, վշտ ճամբաները լուսաւորած էին, որ իբրեւ առաջնորդող լոյսեր հայ կրուող շարքերու յառաջապահ զինուորները եղած էին աղատութեան դժուարաց, խուժարի ճամբաներուն վերայ, — կզգարք դառնապէս թէ ինչ կենսունակ ոյժեր են որ անդարձ կը մեկնին մեր շարքերէն, բայց յոյսը, ան յՄեծ Զոյսը՝ ապագայ հայ կեանքի, որ գալուստներու ծնունդ տուած էր, այդ յոյսը, մենք վստահ ենք թէ գաղափարական ներշնչումներու, անվերջ զոհաբերութիւններու յարաճուն ու վազուն աղբիւրը պիտի ըլլայ՝ որքան որ մեր Տոռապանքը չը բարեփոխւիր, չամբարներ:

Իրարու յաջորդաբար զոհ տուինք, այս վերջացող տարիներու շրջանին մէջ, մեր ամենէն քաջարի հերոսներէն Յաբէթներ, Յակոբներ, Քոնիներ, և այս անգին, անփոխարինելի կորուստներուն ախոր կաւնայ հայ յեղափոխութեան ամենաառաջին մարտիկներէն մին՝ Հէջ. Կոսակցութեան դրօշի ծալքերը ծածանցնող, ժողովրդական ամեն համակրութիւն և սէր վայելող՝ մեր անմահացած ընկեր Արիստեանը:

Եւ ո՞ր ամէրն ալ հարազատ իրենց յեղափոխական զինուորի կոչումին՝ գնացին անխռով գէպի կախաղան ու մահ՝ արհամարհելով կեանքը:

Բռնապետը անգամ մըն ալ հրճուեցաւ, բայց հայ կորովը, հայ կտրիճը աննկուն կը մնայ, նա աներկիւ կը դիմագրաւէ թշնամին բոլոր սարսափներուն, արհաւիրքներուն, որքան որ մեր բազմաշարժար ժողովուրդը կը զոհուի իր իրաւունքներէն:

Բանտի մութ կամարները, անխոս ու մաւր վրէպան եղան բու վերջին հառաչներու, գաղափարի հաւատարմ և անյողողող զինուոր, այդ սրտաբեկ հառաչները՝ վրէժի նոր կայծեր՝ կուգան անգամ մը ևս ամրապնդել մեր վաղեմի Ռխար: Կը խոնարհինք, պաշտելի ընկեր, բու անմահաց յիշատակիդ առջև, դուն հեռացար, բայց բու աղնիւ հոգիդ, բու պաշտած իտէալդ, միշտ անջնջ կը մնայ Հնչակեան զինուորների սրտին մէջ, նրանք միշտ կը բողբոջուին քու գործերովդ, բու օրինակովդ և անվիհեր կերպով կը խիզախեն գէպի Պարտականութեան գաշտը, մինչև վերջին յաղթանակը:

ԿՈՐԻՒՆ

Յունուար 10, 1906

ՏԻՎԼԻՍ

ԵՆ ԴՐԱՆԻ ԻԹՄԷՔՆԵՆ

(Գ. ՄԱՐԶՊԵՏՈՒՆԻ, ՍԱՀԱՌՈՒՆԻ)

Ուսումնասիրի վերջին գործադուլները մանաւանդ պատահեալագրականը, հնարաւորութիւն չտուին մեզ կատարելու մի տխուր պարտականութիւն:

1905 թ. Նոյեմբերի կէսերին Սոխումում մե-

առաջին պաշտօնի շնորհիվ զինուոր՝ Անդրանիկ Ղուկասեան Էթնոքսանը, որի մանրամասն կենսագրութիւնն անելը աւելի յարմար առթի թողնելով, առայժմ կը փորձենք երկու խօսքով միայն բնորոշել հանգուցեալ ընկերոջ կեանքը:

Անդրանիկը ծնունդ չապին—Գարահիսարում, 1878 թուին: Նա ունէր բարձր հասակ, վաղեւուց կազմուածք, վառվռունդ դէմք և հմայիչ լեզու: Դեռ 16 տարեկան հարակից մտաւ Հնչակեանների շարքը՝ նախ որպէս զինուոր և յետոյ որպէս պրօպագանդիստ, միշտ կրակոյ, միշտ անձնորոշութեամբ ծառայելով Հնչ-դըրօշին: 90ական թուականներին անցնելով Ռուսաստան՝ այստեղ ևս նոյն եռանդով շարունակեց իրա արդիւնաւոր գործունէութիւնը, զլիսաւորապէս Նոր-Նախիջևանում, Ֆաքանդում, Մարիուպոլում, և ինչպէս Նոր բոլորամուտէր ծառայութեանն ենք մենք պարտական «Էդիկան»-ին, «Անի» և «Նոր-Գարդութի» Հնչ-Մ—դերը, որտեղի ընկերներն ուղղակի պաշտում էին նրան իր սրտաբացութեան և վերին աստիճանի անկեղծութեան համար:

Նոր համար կեանքի զոհանքը, երկիւղը, նեղութիւնները, ցուրտն ու տապը նշանակութիւն չունեցան և երբեք չկարողացան ընկճել նրա անսպառ սէրը դէպի Բնդ. ս. Գործը: Չնայած որ թանձր հիւանդութիւնը տարիներով ի վեր սպառում էր նրա ծաղիկ կեանքը, բայց նա նախկին եռանդով հասնում էր ամեն տեղ, քարոզում, վիճում, կաղծակերպութիւններ անում և իր կեանքով բարի օրինակ հանդիսանում ընկերների առջև:

Հանգուցեալն ունէր և լաւ գրիչ. նա ունի մի շարք արձակ և ոտանաւոր գրութիւններ, որոնց մէջ հայերի նման սրտացոյցում է նրա ընկերասէր և անջնջ հոգին: Նա սշտաաակցում էր Նոր-Նաւահանգստի Հնչ. Մ—դի «Օրգան»-ին՝ փաստաւրջ յօդաւորներով:

Անդրանիկն ամուսնացած էր, բայց մահը չուտով խլեց նրա ամուսնուն՝ թողնելով մի աղջիկ, այժմ 7 տարեկան, որին իր աչքի լոյսին պէս սիրում էր Անդրանիկը և յաճախ ասում նրան. — Ես էլ կը մեռնեմ չուտով, բայց Զարուհիս կը մեծանայ և կը շարունակի իմ գործը:

Խնդը հայր, մահուան րոպէներին էլ չէր մոռացել իր որբիկին, ահա թէ ինչ էր գրել դպրոցուն ձեռքով իր յուշատետրումը, մեռնելուց մի քանի րոպէ միայն առաջ:

Այստեղի (Սուխումի բուժարանի) բժիշկ Պիէրլաֆը թուանաւորեց ինձ և մահացրեց . . . վրէժաւ լուծէր . . . Աղջիկս Զարուհին Ա. ապրիլին է՝ Ը—ին մօտ, որին թողնում եմ իբրեւ հայր . . . Ինչպէս գիտէ թող մեծցնէ Հայութեան անձնուէր մի անգամ շինելու . . . Ինքն է նրա հայրը՝ իր ամենամըտերիմի փոխարէն . . . Մնաք բարով, ընկերներ:

Մինչև որ սարսափելի լուրը հասաւ մեզ և ես Սուխում գնացի, Անդրանիկը չկար տալ ևս, անշուք դէպքով միայն կարողացաւ տեսնել մի այլ անսպառ զոհի կողքին:

Հանգիստ ունեցողները, թանկագին, անմահ ընկեր. քո անմոռանալի յիշատակը վառ և կենդանի կը մնայ այն բոլոր ընկերների սրտում, որոնք ծանօթ էին

քո օրինակելի գործունէութեանը:

Այլ խնամաւոր, կը դաստիարակուի ու կը մեծանայ քո աչքի լոյս դատրիկը և կը շարունակի այն ս. Գործը, որին նուիրուած էիր դու քո ամբողջ երթնամբ:

ՊԱՆՈՒՆԻ

10 փետր. 1906

ՍՕԽՈՒՄ

ՆԱԽԱԿ ԱՍՏԻԱՍԱՆԻՑ

Ինչ է ասում տարուայ գումարը:

Բէական, ուրիշ խօսքով միապետութեան յաղթութիւնը և յեղափոխութեան ճնշումը՝ իբրեւ թէ առաջ է եկել: Մանաւանդ այդ յաւակնող հիգրան իր գլուխը բարձրացրած է համարում Մոսկուայի յեղափոխական շարժումից յետոյ: Մոսկուայի դէպքը, որը յեղափոխական տեսակէտից երբեք պարտութիւն չի կարելի համարել, մի տեսակ հիասթափում է առաջ բերել թուլասիրտների մէջ: Ահա՛ ձեզ Մոսկուան, — ասում են դրանք, — միապետութիւնը տեսնում էք՝ ուժեղ է. քանի ձեր կողմը չանցնէ զօրքը՝ յաղթութիւն սպասելը դժուար է:

Ճիշտ են այդ եղբակացութիւնները, ճիշտ է որ յեղափոխութիւնը ջարդուած է: Դրան պատասխան կարող է ծառայել մի տարուայ գումարը, ինչ որ արել է յեղափոխութիւնը մեղանում այդ անցած տարին: Մասնակի կերպով յեղափոխական ցոյցերը ճնշուել են տեղ-տեղ, սակայն անուրանալի է որ իրաբանչեւ պարտութիւնը առաջ է բերել իր ետեւից մի ուրիշ բռնկում, և եթէ համեմատեք այդ վերջինը առաջինի հետ, տեսնում էք, որ առաջուան բռնկումները աւելի դաժաճ են իրանց յետորդների հետ համեմատած:

Մի տարի դրանից առաջ՝ Յունուարի 9ի արիւնը Պետերբուրգում առաջին անգամ զօրեղ կերպով մի խոր խրամատ բացեց միապետութեան և ժողովրդի մէջ: Հարիւր հազար պրօլետարիատը եկու իր պահանջներն անելու: Նա դեռ կրում էր իր վոյս խնդրելու, պիտեւելու կնիք: Միապետութիւնը ջարդեց այդ անդէն շարժումը և դիւային բրբիջով պարծեցաւ թէ յաղթեց և յեղափոխութեան վերջ տուեց: Միապետութեան այդ քայլի հետ ժողովրդի միտքը Հաշտուեց և տարուայ մէջ հասարակութեան բոլորը քանի դնաց ուժեղացաւ: Արքայապետ այդ բոլորը վճռեց դէնքի ուժով խլել իր պահանջները: Իսկ երևան բերեց զինուած զօրեղ ցոյցեր Լօճում, Սեաստապոլում, Կրօշտապոլում, Վրախիվսոփոլում, Խոբբինում, Օդեսայում և այլ բազմաթիւ վայրերում: Ապագայ պատմաբանին է մնում գրել աննշլ այդ տարուայ բոլոր շարժումները, մենք այսքանը միայն կրտենք, որ Ռուսաստանի յեղափոխութեան կեանքում 1905 թ. նոյնն է, ինչ 1789-ի 1848 թ. արեւմտեան Եւրոպայում: Միապետութիւնը այդ չիմանալու է դնում և չը

տեսնուած հպարտութեամբ միայն պարծենում՝ երբ մասնակի յաղթութիւն է ունենում: Հեռաւոր խոհանութեամբ ի հարկէ աչքերն է փակում այն իրականութեան առաջ, թէ՛ այսօր, յեղափոխութեան առաջին տարուայ տարեգարձին՝ ինչ է ձեռքից գնացել: Նա լուրձեան է տալիս, որ այդ կարճ միջոցում ձեռքից թուել է ընդմիջտ Գինլանդիան: Պրօլետարիատի ձեռքումն էր մի ժամանակ Սիբիրը, Վեհաստանը, Շուրջ-Բալթեան երկիրը, Կովկասը: Չենք յիշատակում հսկայական գործադուլները: Այդ տեղերի մասին միայն յայտարարում է պատերազմական դրութիւն:

Ահա թէ ինչ է արել յեղափոխութիւնը մի տարուայ ընթացքում:

Չպէտք է մոռանանք, որտեղ որ պատերազմ է, այնտեղ յաղթութիւնը փոխադարձաբար կարող է անցնել այս կամ այն կողմը: Մենք՝ յեղափոխականներս այդ դիտելը և չենք գոռում գոչում այդքան յաղթութիւններից յետոյ էլ:

Յեղափոխութիւնը չի ճնշուած, չնայած իսկ Մոսկւլայի դէպքին: Յեղափոխութիւնը ծաւալում է և լայնանում, որովհետեւ նա իր ոտքի տակ հող ունի: Մարդկութիւնը աշխատում է, շտաճում է, սովորում է և կատարելագործում իր աշխատանքը ու առաջ մղում իր կուլտուրան, չնայելով արգելքներին: Այդ շարժումը ոչ որ չի կարող կանգնեցնել: Պատմութեան մէջ այդպիսի մի դէպք չէ եղել: Համարում է նոյն իսկ փտանգաւոր առաջաւոր հոսանքի դէմ՝ թուժաւ կանգնեցնելը: Նոյն է և յեղափոխութիւնը մարդկանց կեանքում: Նրան կանգնեցնել չի կարելի, քանի որ նա մի կ ու լ տ ու ռ ա կ ա ն շարժում է, որը գալիս է քանդելու հինը, փտածը և վնասակարը:

Հիմա տեսնենք թէ Ռուսաստանում զօրեղ միապետութիւնը՝ ինչ ուժի վրայ է հիմնում: Ամօթ է ասել՝ որ սե հարիւրակի և զօրքի մի մասի վրայ: Իսկ դա ոյժ համարուել երբեք չի կարող: Այդ դիտէ հենց ինքը միապետութիւնը և այդ պատճառով դէս ու դէն է ընկնում և օգնութիւն է աղերսում իրեն: Բուրժուա և այն կուսակցութիւններից, որոնք այսպէս կամ այնպէս վախենում են պրօլետարիատի շարժումից: Բայց այդ էլ անելու շնորհ չունի: Հոկտեմբերեան մանիֆէստը մեր պրօլետար. կուսակցութեան համար կարելի է ասել հարուած էր, որովհետեւ սըւրանով միապետութիւնը բաժանեց մեզից բոլոր միջակ բոլորող կուսակցութիւններին, և պրօլետարիատի թողեց մենակ: Սակայն, ինչպէս որ միապետութիւնը ինքն է եղել միշտ յեղափոխութեան տարածողը և քնած մտքերի արթնացնողը, այդ անգամ էլ նոյն ոյժը եկաւ մեզ սգնութեան: Միապետութիւնը անամօթ կերպով խլեց հոկտեմբերեան մանիֆէստը և այդպիսով երկու խոշոր կուսակցութիւնները՝ բուրժուական և իրենքու ճեռացրեց իրանից: Մանաւանդ վերանք խիստ վիրաւորուած դգացին, երբ վիտտէն չեն դրենց Մոսկուայի Համադումարի ներկայացուցիչներին:

Ներկայումս միապետութիւնը դարձեալ մնացել է մենակ ու հարիւրակի յոյսով ինչպէս հոկտեմբերեան օրերից առաջ: Թայլ ենք տալիս կարծելու, որ այդ սե ուժերը ապագայում կը կազմեն մեր պահպանողական կուսակցութիւնը: Բայց զօրեղ պատուանդան կարող են լինել միապետութեան համար: Բոլորովին: Ոչ մի երկիր, ուր պահպանողական կուսակցութիւնը թագաւորում է այն սկզբունքով, ինչ որ մեղանում, մենք չգիտենք: Անգլիայում, օրինակ, պարլամենտը յայտնի չընտանում է պահպանողականների ձեռքը, օրինակ 1895 թ իրենքու միմիսարութիւնը տեղի տուեց պահպանողական միմիսարութեան, այժմ էլ, ինչպէս ցոյց տուեցին ընտրութիւնները, Անգլիան կրկին կունենայ իրենքու միմիսարութիւն, — սակայն այդ տեղի է ունենում մի տեսակ պետական կազմի մէջ, որտեղ ընդունուած են մարդկութեան բնական պահանջները՝ խօսքի, մտքի և այլ ազատութիւնները: Դրանք այնպիսի անհրաժեշտ կարևորութիւններ են, որոնցով միայն պայմանաւորուած է հասարակութիւնների գոյութիւնը: Իսկ մեր պահպանողականները այդ ամենից այնպէս են խուսափում, ինչպէս թուրքը խողի մտից և ձգտում են իրանք ունենալ բոլորը՝ իսկ միւսները՝ ոչինչ: Մի խօսքով ուղում են ձգտել արսօրիւտ միապետական իշխանութեան: Իսկ այդպիսի կարգ երբեք չի կարող գոյութիւն ունենալ կապիտալիստական երկրում:

Ահա այդ ակներե փաստերը գալիս են ապացուցելու, որ ոչ թէ միապետութիւնը ջնջել է յեղափոխութիւնը, այլ, ընդհակառակը, նրա ծաւալման մեծ զարկ է տուել: Ինչ ասել կուզէ, որ խելքը գլխին միապետութիւնը կարող էր դուրս գալ այդ նեղ դրութիւնից պատուով, բայց ո՛վ է այժմ մեր կառավարութեան խելքը գլխին համարում: Ո՛վ չի ասել, որ այդ խարխուլ տան մէջ թագաւորում է կոյր շահասիրութիւնը, ինտրիգան, զօրեղ հակակրօթիւն դէպի ամեն մի յառաջդէմ շարժում: Այսպիսով և թէ գուժար տանք՝ ինչ էր այդ տարին յեղափոխութեան համար, պէտք է ասենք, որ նա շատ ուժեղ էր, նրա պատմութեան էջերում բազմաթիւ յաղթութիւններ են արձանագործուած և մինչև անդամ, ասենք աւելին, նա հարուստ է նրանով, որ պարզ որոշում է իր զիրքն: Այդ մի տարուայ արդիւնքն է, որ Հատերի, նոյն իսկ զօրքի գիտակցութեան մէջ մտքեց յեղափոխութեան իրկարար նշանակութիւնը: Ո՛վ մի տարի առաջ կյանքգներ այդ յաղթութիւնները նախատեսել և յեղափոխութիւնը մի ոյժ ճանաչել մի ոյժ, որի դէմ անհրաժեշտ են համարում կազմակերպուել: Յեղափոխութեան մասին ոչ թէ ծակ ու ծրկերում են խօսում այժմ, այլ նրա համար բացարձակ ցործում են: Դա է յիշողութիւնը:

Իսկ այդ բալբից յետոյ կարելի է ասել, թէ ճշշուել է յեղափոխութիւնը:

ԺԱՆԻԲ

29 Թուեմբերի, ԱՍՏԻԲԱՆ

ՀԱՅԿԵՍԵՐ 17-Ի ՄԱՆԻՖԵՍՏ

Եւ չեմ ուզում խօսել այստեղ թէ ինչ բանի արդիւնք էր 1905 թ. Հոկտեմբերի 17ին հրատարակուած ցարի «ազատարար» մանիֆէստը, որովհետեւ դա մեզ հետոյն կը տանէր։ Բայց անհետաքրքիր չէր լինիլ, եթէ երկու խօսքով ընդգծէինք նրա իսկական արժէքը. ու նշանակուած թիւնը։

Այդք է ասել, որ այդ մանիֆէստի հրատարակուած օրից իսկ Ռուսաստանի յեղափոխական կազմակերպութիւնները յայտարարեցին ի լուր աշխարհի, որ իրենք ոչ մի արժէք չեն տալիս այդ ակտին, քանի որ նա զուրկ է անկեղծ, պարզ առից և երկրորդ, որ նրանում խոստացուած բարեփոխումները բաւարարութիւն չեն տալիս բանուոր և հողագործ դասերի տարրական պահանջներին անգամ։ Ինչ վերաբերում է ուսն հասարակութեան բարձր խաւերին, արւորք ոչ միայն բաւարար էին գտնուում այդ ակտը, այլև չափազանցութիւն նկատելով նրա մէջ՝ սկսեցին ամեն կերպ խօշնդոտներ յարուցանել նրա գործադրութեան դէմ։

Այժմ երկու խօսք այն մասին, թէ ինչ նշանակութիւն ունեցաւ կամ ինչ արդիւնք տուեց այդ հրովարտակը։

Իս օսքի ազատութիւնը, որ միաժամանակ նշանակուած էր և՛ մասնաւոր ազատութիւն, գոյութիւն ունեցաւ միայն 2-3 շաբաթ, երբ մարդիկ հրատարակութիւն ստացան ազատուելու լեզուի վրայ դրուած անողոր կապանքներից և իրենց միտքն արտայայտելու հրապարակաւ, առանց քաշուելու, առանց կեղծելու։ Հոկտ. 17ից յետոյ գեռ մի ամիս չանցած՝ նոյն իսկ Պետերբուրգում տեղի ունեցան մի քանի լըրագիքների փակումներ, իսկ գաւառական քաղաքներում և գիւղերում ոստիկանութիւնը «բարեհաճել» սկսեց չափաւորելու միտինգներում խօսող ծառախօսների լեզուն, գտնելով որ «սանձարձակ քարոզութիւնները տեղի կտան անախորժութիւնների»։ Այդպիսով խօսքի ազատութիւնը ինքն ըստ ինքեան, որպէս վստահար, յետ խլուեց։ Այսօր չէք գտնիլ Ռուսաստանում և ոչ մի լրագիր, որը իրաւունք ունենար Եղորտի. լեզւից ջոկ. որ և է լեզու գործածելու և կամ չէք գտնիլ մի մարդ, որը առանց բանտարկուելն աչք առնելու յանգընէր հրապարակաւ երկու խօսք ասել պետական քաղաքականութեան վերաբերութեամբ։

Պէտք է արժանաւորել ազատութիւնը նրանից տուելի երկար չապրեց։ Մի շարք շրջաբերականներին (որոնցով սահմանափակուած էին ժողովրդական գումարումները, միթինկները, բանւորական խորհրդակցութիւնները ևն) յաջորդեց «պատերազմական զրգւթիւնը» կամ «սաստիացրած պաշտպանութիւնը», որի մէջ գտնուում է այսօր համարեաւ ամբողջ Ռուսաստանը և որի զօրութեամբ մի քանի հոգուց աւելի մարդկանց համախմբումը խստիւ արգելուած է, հակառակ դէպքում՝ զինուորի սուխը կամ կողակի սուրը կը շողշողան նրանց գլխին։ Գումարման ազատութիւն, դա մի վստահութիւն երազ էր իսկապէս, որ բանակարութեան յաջողուց ժամանակաւորապէս խեղդելէ։

Այժմ թիւնն երի ազատութիւն (որա հետ միասին և՛ գործադուլի)։ Սա այն հետեւունքն ունեցաւ, որ ոստիկանութիւնը հրատարակութիւն ձեռք բերեց ընդորոշելու մարդկանց գոյները և արձանագրելու նրանց անունները, վայ այն մարդուն, որ համարձակուել է հրապարակաւ աչքի ընկնել որպէս «ձախակողմեան»։ Նա այսօր աւօր-փոքօք կառաւորագուելի դէպի... բանաւ։ Այժմ, ոստիկանութիւնը քաջ է բաց արգելում է քաղաքական որ և է յառաջագիւ միութիւն։ Առ այժմ լոյլատրուած են միայն միապետական և չափաւոր միութիւնների կազմակերպումներ, իսկ երկաթուղային, պօստ-հեռագրական և այլ գործադուլներին մանակցողներից հազարներով բանտարկուած են, ծեծի ու փետի ենթարկուած, ծառայութիւնից արձակուած։

Իս զձի ազատութիւնը համեմատաբար աւելի բազդաւոր էր, որ դեռ չի ծնած էլ մեռաւ։ Այդ ուղղութեամբ ոչ մի քայլ չէ բռնուել դէպ յառաջ։

Այժմ և բնականաբար յանձնուած խելիութիւնը այսօր ամենաշայն չափով գործադրուած է կեանքում... բոլորովին հակառակ մըտքով։ Չէք գտնիլ Ռուսաստանում մի անկիւն, որ այս րոպէիս հատ-հատ կամ խմբական ձերբակալութիւններ տեղի չունենան։ Իսկ խուլարկութիւնները առանցքաւորական չափեր են ընդունում բովանդակ Ռուսաստանում, ամենաշնչին պատրուակով ցարի շինովները կատարում են ափաշկարա կողոպուտներ, բոլոր բանտերը, կառավարական շինութիւնների նկուղները, ոստիկանատները և միջնակարգ ու բարձրագոյն դպրոցները լիկ լիքն են ձերբակալուած երիտասարդներով, առանց սեռի խտրութեան։ Ահա մեր վաւերած քաղաքացիական ազատութեան հիմունքները։

ԻԿՊԻՏԵՐ

25 Փետրուարի, 1906

ԱՆԱՊԱ

ԲԱԹՈՒՄԻ ՎԵՐՋԻՆ ԴԻՊԼՈՄԻ ԸԹԹԻԻ

Բաթումը թէեւ վարչական տեսակէտից մի առանձին նահանգ է, բայց աշխարհագրական տեսակէտով իսկապէս Բաթումիի նահանգի շարունակութիւնն է կազմում։ Այս կողմերի տիրապետող ագրաբանակցութիւնը վրացիներն են, մանապէս թրքացած վրացիները, որոնք թէեւ կրօնով մահմեդական են, բայց գեռ պահած են իրենց լեզուն և վրացական բոլոր բնորոշիչ յատկութիւնները։

Բաթումը Բագուի շտեմարանը լինելով՝ վերջին տարիներս այստեղ հաւաքուած էին մօտ 10,000 բանւորներ, որոնք աշխատում էին երեք մեծ գործարանների մէջ՝ Ռօզիլիդի, Մանթաշեանի և Խաչաթրիանի։ Գործաւորական շարժումները համեմատաբար կովկասի ուրիշ քաղաքների, աւելի շուտ զարգացան այս քաղաքին մէջ. երեք տարի առաջ էր, որ 40 զոհ մէկ կէն տուեցին բանւորները՝ իրենց իրաւունքների պաշտ-

պանութեան համար: Երբ բիւրօկրատիայի պարծանքը եղող զինուորական ուժը փշուր փշուր եղաւ: Մանչուրական դաշտերում և յեղափոխական ախրները կոհակների փութակեցան, Բաթումը առաջին քաղաքներից մէկը եղաւ, որ յառաջ նետուեց դէպի յեղափոխական շարժումը: Սկզբում այդ շարժումները արտայայտուեցան գործադուլներով՝ որոնք լուկի քաղաքական, քան տնտեսական բնաւորութիւն ունէին: Ինչ տակ կուզի որ բանւորների և գործարանատէրների ընդհարումների ժամանակ, բիւրօկրատիան շարունակ բռնում էր այս վերջինների կողմը, բայց տեսնելով որ այդպէս գոյապիտի լինելը խորտակել գործաւորական ուժը՝ նա բաց էր բաց պահանջեց գործարանատէրներից որ իրենց գործարանները փակեն, որովհետեւ Բաթումը դառնում էր յեղափոխական մի հնոց: Ամենից առաջ փակուեց Ռօդչիլդի գործարանը, յետոյ խաչատրեանինը և ամենից վերջը, սրանից 6 ամիս առաջ՝ Մանթաշեանինը: Հետեանքը այն եղաւ, որ գործաւորների մեծ մասը ուրիշ տեղեր ցրուեցան գործ ձորելու համար: Չմոռանալ ասել, որ 10 հազար գործաւորից մօտ 7 հազարը վրացի էր, իսկ 3 հազարը հայ վերջիններիս մէջ մեծամասնութիւն կազմում էին Հնչակեանները:

Հոկտեմբեր 17ի մանիֆէստից յետոյ Բաթումը իրաւ որ յեղափոխական մի վառարան դարձաւ՝ Սօցիալ-Դեմոկրատներ, Հնչակեաններ, Ֆեդերալիստներ, և այլն, համերաշխաբար եռանդուն կերպով գործել ըսկրսեցին, շատ ժամանակ չանցած քաղաքը իր շրջականերով յեղափոխականների ձեռքն անցաւ: Յեղափոխական կուսակցութիւնների ներկայացուցչական ժողովը էր որ ամեն բան վարում և կարգադրում էր, ինչպէս էին գործադուլները և խանութների բացել ու փակելը և այլն:

Ղեկ հազիւ Բէակցիան գլուխ բարձրացրած՝ Բաթումի փողոցները լցուեցան խուլիգան «հայրենասերներ», որոնք ուրիշ քաղաքներից յանձնարարուած եկուորներ էին, բաղկացած ուսու ժողովուրդի տակաւնից, որոնց շարքերի մէջ մտան և տեղական սրիկաները, բիւրօկրատիան կարճ ժամանակի մէջ դրսից 200 խուլիգան լցրեց քաղաքը և նպատակ ունէր թելադրել իր այդ հարազատ գործիքներին, որ գործի սկսեն՝ այրել, կողոպտել, սպանութիւններ անել, որպէս զի այդպիսով զինուորական միջամտութիւն յառաջ բերի քաղաքացիների և տեղական իշխանութեան միջև: Սակայն բաւականին ժամանակ անցաւ և տեղական իշխանութիւնները Համարձակուեցան գործնական մի քայլ անել այդ ուղղութեամբ՝ միջոտ երկուղ կրելով յեղափոխական ուժից, որ կազմ ու պատրաստ կեցած էր: Այդ ժամանակներում էր որ քաղաքային տան մէջ մի մեծ միթինգ կայացաւ, ներկայ էին քաղաքագլուխը, գործօն կուսակցութիւնների ներկայացուցիչները և ստորադր թիւ ժողովուրդի: Ընդհանուր որոշում եղաւ որ իրենք պատգամաւորներ քաղաքացիին հետ միասին նահանգապետին ներկայանան և պահանջեն, որ Արաքսի պահպանութիւնը յանձնախմբաբար քաղաքներից բաղկացած 100 հոգիից զինուած մի միլիցիայի որոնցից 30ը փակագծի մէջ տանք, Հնչակեան պիտի լինել: Այդպէս էլ եղաւ՝ պատգամաւորները քաղաքագլխին հետ միասին ներկայացան նա-

հանգապետին և դրին քաղաքացիների պահանջը: Նահանգապետը սկզբունքով ընդունեց եղած առաջարկը և քաղաքագլխին յանձնեց այդ ուղղութեամբ մանրամասն մի ծրագիր մշակել և իրեն վաւերացման ենթարկել: Պատգամաւորները վերադարձան և նահանգապետի համաձայնութիւնը յայտնեցին միթինգին և վերջինս անմիջապէս ընտրեց 14 հոգուց բաղկացած մի յանձնախումբ, որ հերթական խնդիրները պիտի կարգադրէր, շաբաթը երկու անգամ ժողով ունենալով: Յանձնախումբի անդամներից Ար հայ էին, և որոնց մէջ աչք ընկողն էր Հնչակեան կուսակցութեան տեղական ներկայացուցիչը, որին և յանձնուեցաւ միլիցիայի պահպանութեան համար 45 հազար ուսու ծախքերի աղբիւրներ գտնելու և նախահաշիւ ներկայացնելու գործը: Սա տեղի էր ունենում Նոյեմբերի 28ին: Դեռ խորհրդակցութիւնները չվերջացած՝ հիւանդանոցի հեռախօսը սկից արագ արագ հնչել: Յանձնախումբի անդամներից Պր. 2-ն հեռախօսի պատասխանը առնելու գնաց և անմիջապէս վերադառնալով յայտնեց թէ կոտորածը արդէն սկսուած է և սպանուած են 7ը հոգի, ու շատերն էլ վիրաւորուած: Միթինգը ցրուեցաւ, և որովհետեւ Յանձնախումբի անդամներից մեծամասնութիւնը կուսակցական ներկայացուցիչներ էին, ամենքն էլ վազեցին իրենց կուռուղ ուժերը կազմակերպել՝ դուրս հանելու համար: Դա ժամի 8-ն էր, և բեկոյեան ժամը 10ին ամբողջ Բաթումը արդէն ոտքի ելած՝ հայ, վրացի, աչք թափուեցան քաղաքային տան բակը և դահլիճը: Սկսուեցաւ հսկայական միթինգը, որի ընթացքում պարզուեց այն իրողութիւնը, որ կոտորածը սկսել էին կողակները որոնք առանց հրազենի և միայն դաշոյններով զինուած՝ 2-3 հոգիներից բաղկացած խմբերով քաղաքի զանազան մասն էին ցրուած և հաւրկալածին դաշոյնի մահաբեր հարուածներ տալիս, որպէս զի իրանց եղեռնագործական արարքին ոչ ոք վկայ չմնայ, այդ կերպով 14 հոգի սպանուել և սրգէն հիւանդանոց էին փոխադրուել:

Միթինգը որոշեց երեք հոգուց բաղկացած մի պատգամաւորութիւն ուղարկել նահանգապետի մօտ հետեւեալ առաջարկներով. — 1) Անմիջապէս կողակներին փակել դռանոցներում, թող չտալ որ դուրս գան և ապա՝ ֆիզիքական կտրելութեան ամեն թող տուած արագութեամբ՝ նրանց հեռացնել Բաթումից, 2) առանց որ և է արգելքի քաղաքային միլիցիան կազմակերպուի և գործի գլուխ անցի: Հսկառակ պարագայում պիտի փակուէին բոլոր խանութները և երկաթուղային, հեռագրական, հեռախօսական, լո աւտօբուսական բոլոր գործաւորները գործադուլ պիտի անէին:

Նահանգապետի պատասխանը եղաւ, որ ինքը իսկոյն և եթ կողակներին փակել կտայ իրենց դռանոցների մէջ, և այդպէս էլ արեւ, իսկ ինչ որ վերաբերում է քաղաքից նրանց հեռացնելու խնդրին, դա, յասաց, կախումն ունէր միայն փոխարքայի իրաւասութիւնից, հետեւաբար ցանկութիւն յայտնեց իր կողմից մի պատգամաւոր ուղարկել Արօնցով-Դաշկովի մօտ այդ խնդրի վերջնական կարգադրութեան համար, որ դուրս համար էլ յեղափոխական կուսակցութիւնների ներկայացուցիչներից խնդրեց, որ նրանք երթան երթան իրենց հարաւորութիւն տան այդ պատգամաւորին: Յեղափոխականները հա-

նաւ մի պաշտելի Հնչակեան զինուոր՝ Անդրանիկ-Ղուկասեան էթմէքճեանը, որի մարտամասն կենսագրութիւնն անելը աւելի յարմար առթի թողնելով, առ այժմ կը փորձենք երկու խօսքով միայն բնորոշել հանգուցեալ ընկերոջ կեանքը:

Անդրանիկը ծնուեց Շապին-Գարահիսարում, 1878 թուին: Նա ունէր բարձր հասակ, վայելուչ կազմուածք, վառվռուն դէմք և հմայիչ լեզու: Գեռ 16 տարեկան հասակից մտաւ Հնչակեանների շարքը՝ նախ սրպէս զինուոր և յետոյ որպէս պրօպագանդիստ, միշտ կրակոյ, միշտ անձնութեամբ ծառայելով Հնչ. զբ. բաշին: 90-ական թուականներին անցնելով Ռուսաստան՝ այստեղ ևս նորն եռանդով շարունակեց իրա արդիւնաւոր գործունէութիւնը, գլխաւորապէս Նոր-Նախիջևանում, Տաթարստանում, Մարիուպոլում, ևն ևն. Նրա բոլորանուէր, ծառայութեան ենք մենք պարտական «Հոգեմալի», «Անիի» և «Նոր-Գարահիսարի» Հնչ. Մ.—ղերը, որանդի ընկերներն ուղղակի պաշտում էին նրան իր սրտաբացութեան և վերին աշտիճանի անկեղծութեան համար:

Նրա համար կեանքի զրկանքը, երկիւղը, նեղութիւնները, ցուրտն ու տապը Նշանակութիւն չունեցան և երբեք չկարողացան ընկճել նրա անսպառ սէրը դէպի Յեղ. ս. Գործը: Չնայած որ թանջք հիւանդութիւնը տարիներից ի վեր սպառում էր նրա ծաղիկ կեանքը, բայց նա նախկին եռանդով հասնում էր ամեն տեղ, քարոզում, վիճում, կազմակերպութիւններ անում և իր կեանքով բարի օրինակ հանդիսանում ընկերների առջև:

Հանգուցեալն ունէր և լաւ գրիչ. նա ունի մի շարք արձակ և ոտանաւոր գրութեանքներ, որոնց մէջ հայերի նման որսացողում է նրա ընկերասէր և անջնջ հոգին: Նա սշխատակցում էր Նոր-Նախահանգստի Հնչ. Մ.—ղի «Օրդան»ին՝ փաստալից յօդւածներով:

Անդրանիկն ամուսնացած էր, բայց մահը շուտով խլեց նրա ամուսնուն՝ թողնելով մի աղջիկ, այժմ 7 տարեկան, որին իր աչքի լոյսին պէս փրկում էր Անդրանիկը և յաճախ ասում նրան. — Ես էլ կը մեռնեմ շուտով, բայց ջարուհիս կը մեծանայ և կը շարունակի իմ գործը:

Խեղճ հայր, մահուան բոստներին էլ չէր մոռացել իր որբիկին. ահա թէ ինչ էր դրել գողութուն ձեռքով իր յուշատետրումը, մեռնելուց մի քանի րոպէ միայն առաջ:

Այստեղի (Սուխումի բուժարանի) բժիշկ Պիէրսուլը թուեաւորեց ինձ և մահացրեց . . . վրէժըս լուծէր . . . Աղջիկս ջարուհին Ա. ապ. յումն է՝ Հ.—ին մօտ, որին թողնում եմ իբրեւ հայր . . . Ինչպէս գիտէ՝ թող մեծցնէ Հայութեան անձուէր մի անգամ շինելու . . . Ինքն է նրա հայրը իր ամենամեծ տերիմի փոխարէն . . . Մնաք բարով, ընկերներ . . . »:

Մինչև որ սարսափելի լուրը հասաւ մեզ և ես Սուխում գնացի, Անդրանիկը չկար այլևս, անշուք գերեզմանը միայն կարողացաւ տեսնել մի այլ անպարտ զոհի կողքին:

Հանգիստ ոսկորներիդ, թանկագին, անմահ ընկեր. քո անմոռանալի յիշատակը վառ և կենդանի կը մնայ այն բոլոր ընկերների սրտում, որոնք ծանօթ էին

քո օրինակելի գործունէութեան:

Ար խնամուի, կը դատարարակուի ու կը մեծանայ քո աչքի լոյս դատիկը և կը շարունակի այն ս. Գործը, որին նուիրուած էիր դու քո ամբողջ էութեամբ:

ՊԱՆՈՒՆԻ

10 փետր. 1906

ՍՈՒՈՒՍ

ՆԱՄԱԿ ԱՍՏԻՆԱՆԻՑ

Ինչ է ասում տարուայ գումարը:

Իհարկեան, ուրիշ խօսքով միապետութեան յաղթութիւնը և յեղափոխութեան ճնշումը՝ իբրեւ թէ առաջ է եկել: Մանաւանդ այդ յաւակնոտ հիգրան իր վշտը բարձրացրած է համարում Մոսկուայի յեղափոխական շարժումից յետոյ: Մոսկուայի դէպքը, որը յեղափոխական տեսակետից երբեք պարտութիւն չի կարելի համարել, մի տեսակ հիասթափում է առաջ բերել թուրքականների մէջ: Ահա՛ ձեզ Մոսկուան, — ասում են գրանք, — միապետութիւնը տեսնում էք՝ ուժեղ է. քանի ձեր կողմը չանցնէ զօրքը՝ յաղթութիւն սպասելը դժուար է:

Ղիշի են այդ եզրակացութիւնները. ճիշդ է որ յեղափոխութիւնը ջարդուած է: Գրան պատասխան կարող է ծառայել մի տարուայ գումարը, ինչ որ արել է յեղափոխութիւնը մեղանում այդ անցած տարին: Մասնակի կերպով յեղափոխական ցոյցերը ճնշուել են տեղ-տեղ, սակայն անուրանալի է որ իւրաքանչիւր պարտութիւնը առաջ է բերել իր ետեւից մի ուրիշ բռնկում, և եթէ համեմատեք այդ վերջինը առաջինի հետ, տեսնում էք, որ առաջուան բռնկումները աւելի գաճաճ են իրանց յետնորդների հետ համեմատած:

Մի տարի դրանից առաջ՝ Յունուարի 9ի՝ արիւնք Պետերբուրգում առաջին անգամ զօրեղ կերպով մի խոր խրամատ բացեց միապետութեան և ժողովրդի մէջ: Հարիւր հազար պրօլետարիատը եկաւ իր պահանջներն անելու: Նա դեռ կրում էր իր վրայ խնդրելու, աղերսելու կնիք: Միապետութիւնը ջարդեց այդ անդէն շարժումը և դիւային քրքիջով պարծեցաւ թէ յաղթեց և յեղափոխութեան վերջ տուեց: Միապետութեան այդ քայլի հետ ժողովրդի միտքը չհաշտուեց և տարուայ մէջ հասարակութեան բոլորը քանի գնաց ու ժեղացաւ: Վերջապէս այդ բոլորը վճուեց զէնքի ուժով խլել իր պահանջները: Եւ երեւան բերեց զինուած զօրեղ ցոյցեր լծում, Սեւաստօպօլում, Կրօնշտադում, Վլադիվոսթօկում, Խորբինում, Օդէսայում և այլ բազմաթիւ վայրերում: Ապագայ պատմաբանին է մնում գրի առնել այդ տարուայ բոլոր շարժումները, մենք այսքանը միայն կ'անենք, որ Ռուսաստանի յեղափոխութեան կեանքում 1905 թ. նոյնն է, ինչ 1789 և 1848 թ. արեւմտեան Եւրոպայում:

Միապետութիւնը այդ չիմանալու է գնում և չը

տեսնուած հպարտութեամբ միայն պարծենում՝ երբ մասնակի յաղթութիւն է ունենում: Հեռատես խոհանութեամբ ի հարկէ աչքերն է փակում այն իրականութեան առաջ, թէ այսօր, յեղափոխութեան առաջին տարուայ տարեգարնին՝ ինչ է ձեռքից գնացել: Նա լուրձեան է տալիս, որ այդ կարճ միջոցում ձեռքից թուել է ընդմիջտ ֆինլանդիան: Պրօլետարիատի ձեռքումն էր մի ժամանակ Սիբիրը, Լեհաստանը, Շուրջ-Բալթեան երկիրը, Կովկասը: Չենք յիշատակում հսկայական գործադուլները: Այդ տեղերի մասին միայն յայտարարում է պատերազմական դրութիւն:

Ահա թէ ինչ է արել յեղափոխութիւնը մի տարուայ ընթացքում:

Չպէտք է մոռանանք, որտեղ որ պատերազմ է, այնտեղ յաղթութիւնը փոխադարձաբար կարող է անցնել այս կամ այն կողմը: Մենք՝ յեղափոխականներս այդ գիտենք և չենք գոռում գոչում այդքան յաղթութիւններից յետոյ էլ:

Յեղափոխութիւնը չի ճնշուած, չնայած իսկ Մոսկուայի դէպքին: Յեղափոխութիւնը ծաւալում է և լայնանում, որովհետեւ նա իր ոտքի տակ հող ունի: Մարդկութիւնը աշխատում է, շտաժում է, սովորում է և կատարելագործում իր աշխատանքը ու առաջ մղում իր կուլտուրան, չնայելով արգելքներին: Այդ շարժումը ոչ որ չի կարող կանգնեցնել: Պատմութեան մէջ այդպիսի մի դէպք չէ եղել: Համարում է նոյն իսկ վտանգաւոր առաջաւոր հոսանքի դէմ թուել կանգնեցնելը: Նոյն է և յեղափոխութիւնը մարդկանց կեանքում: Նրան կանգնեցնել չի կարելի, քանի որ նա մի կ ու լ տ ու ռ ա կ ա ն շարժում է, որը գալիս է քանդելու հինը, փտածը և վնասակարը:

Հիմա տեսնենք թէ Ռուսաստանում զօրեղ միապետութիւնը ինչ ուժի վրայ է հիմնում: Ամօթ է ասել, որ սե հարիւրակի և զօրքի մի մասի վրայ: Իսկ դա ոյժ համարուել երբեք չի կարող: Այդ գիտէ հենց ինքը միապետութիւնը և այդ պառճառով դէս ու դէն է ընկնում և օգնութիւն է աղերսում լիբերալ, բուրժուա և այն կուսակցութիւններից, որոնք այսպէս կամ այնպէս վախենում են պրօլետարիատի շարժումից: Բայց այդ էլ անելու շնորհ չունի: Հոկտեմբերեան մանիֆէստը մեր պրօլետար կուսակցութեան համար կարկի է ասել հարուած էր, որովհետեւ սըրանով միապետութիւնը բաժանեց մեզից բոլոր միջակ բողոքող կուսակցութիւններին, և պրօլետարիատին թողեց մենակ: Սակայն, ինչպէս որ միապետութիւնը ինքն է եղել միշտ յեղափոխութեան տարածողը և քնած մտքերի արթնացնողը, այդ անգամ էլ նոյն ոյժը եկաւ մեզ օգնութեան: Միապետութիւնը անամօթ կերպով խնց հոկտեմբերեան մանիֆէստը և այդպիսով երկու խոշոր կուսակցութիւնները՝ բուրժուական և լիբերալ հեռացրեց իրանից: Մանաւանդ դրանք խիստ վերաւորուած զգացին, երբ Վիատէն շնչողունեց Մոսկուայի Համագումարի ներկայացուցիչներին:

Ներկայումս միապետութիւնը դարձեալ մնացել է մենակ սե հարիւրակի յոյսով ինչպէս հոկտեմբերեան օրերից առաջ:

Թող ինք տալիս կարծելու, որ այդ սե ուժերը ապագայում կը կազմեն մեր պահանջողական կուսակցութիւնը: Բայց զօրեղ պատուանդան կարող են լինել միապետութեան համար: Բոլորովին: Ոչ մի երկիր, ուր պահանջողական կուսակցութիւնը թագաւորում է այն սկզբունքով, ինչ որ մեղանում, մենք չգիտենք: Անգլիայում, օրինակ, պարլամենտը յայտնի չընտնում անցնում է պահանջողականների ձեռքը, օրինակ 1895 թ լիբերալ մինիստրութիւնը տեղի տուեց պահանջողական մինիստրութեան, այժմ էլ, ինչպէս ցոյց տուեցին ընտրութիւնները, Անգլիան կրկին կունենայ լիբերալ մինիստրութիւն, — սակայն այդ տեղի է ունենում մի տեսակ պետական կազմի մէջ, որտեղ ընդունուած են մարդկութեան բնական պահանջները՝ խօսքի, մտքի և այլ ազատութիւնները: Դրանք այնպիսի անհրաժեշտ կարեւորութիւններ են, որոնցով միայն պայմանաւորուած է հասարակութիւնների գոյութիւնը: Իսկ մեր պահանջողականները այդ ամենից այնպէս են խուսափում, ինչպէս թուրքը խողի մտքի և ձգտում են իրանք ունենալ բոլորը իսկ միւսները՝ ոչինչ: Մի խօսքով ուղում են ձգտել արսօլիտ միապետական իշխանութեան: Իսկ այդպիսի կարգ երբեք չի կարող գոյութիւն ունենալ կապիտալիստական երկրում:

Ահա այդ ակներե փաստերը գալիս են ապացուցելու, որ ոչ թէ միապետութիւնը ջնջել է յեղափոխութիւնը, այլ, ընդհակառակը, նրա ծաւալման մեծ զարկ է տուել: Ինչ ասել կուզէ, որ խելքը գլխին միապետութիւնը կարող էր դուրս գալ այդ նեղ գրութիւնից պատուով, բայց ո՞վ է այժմ մեր կառավարութեան խելքը գլխին համարում: Ո՞վ չի ասել, որ այդ խարխուլ տան մէջ թագաւորում է կոյր շահասիրութիւնը, ինտրիգան, զօրեղ հակակրօթիւն դէպի ամեն մի յառաջագէտ շարժում: Այսպիսով եթէ գուժար տանք՝ ինչ էր այդ տարին յեղափոխութեան համար, պէտք է ասենք, որ նա շատ ուժեղ էր: Նրա պատմութեան էջերում բազմաթիւ յաղթութիւններ են արձանագրուած և մինչև անգամ, ասենք աւելին, նա հարուստ է նրանով, որ պարզ որոշում է իր զիրքն: Այդ մի տարուայ արդիւնքն է, որ շատերի, նոյն իսկ զօրքի գիտակցութեան մէջ մտքեց յեղափոխութեան փրկարար նշանակութիւնը: Ո՞վ մի տարի առաջ կյանդգնէր այդ յաղթութիւնները նախատեսնել և յեղափոխութիւնը մի ոյժ ճանաչել, մի ոյժ, որի դէմ անհրաժեշտ են համարում կազմակերպուել: Յեղափոխութեան մասին ոչ թէ ծակ ու ծուկերովն են խօսում այժմ, այլ նրա համար բացարձակ գործում են:

Եւ այդ բոլորից յետոյ կարելի է ասել, թէ ճնշուել է յեղափոխութիւնը:

ԺԱՆԻԲ

29 Յունվարի, ԱՍՏԻԱՆԱՆ

ՀՈԿՏԵՄԲԵՐ 17-Ի ՄԱՆԻՖԵՍՏԸ

Ես չեմ ուզում խօսել այստեղ թէ ինչ բանի արդիւնք էր 1905 թ. Հոկտեմբերի 17ին հրատարակուած ցարի «ազատարար» մանիֆէստը, որովհետեւ դա մեզ հետեւեալ կը տանէր: Բայց անհետաքրքիր չէր լինիլ, եթէ երկու խօսքով ընդգծէինք նրա իսկական արժէքը՝ ու շատ ակնթիւնը:

Այնքան է ասել, որ այդ մանիֆէստի հրատարակուած օրից իսկ Ռուսաստանի յիդափոխական կազմակերպութիւնները յայտարարեցին ի լուր աշխարհի, որ իրենք ոչ մի արժէք չեն տալիս այդ ակնթիւն, քանի որ նա զուրկ է անկեղծ, պարզ տոնից և երկրորդ, որ նրանում խոստացուած բարեփոխումները բաւարարութիւն չեն տալիս բանուոր և հողագործ դասերի տարրական պահանջներին անգամ: Ինչ վերաբերում է ուրեք հասարակութեան բարձր խաւերին, սուրանք ոչ միայն բաւարար էին գտնուում այդ ակնթիւն, այլև չափազանցութիւն նկատելով նրա մէջ՝ սկսեցին ամեն կերպ խոչընդոտներ յարուցանել նրա գործադրութեան դէմ:

Այժմ երկու խօսք այն մասին, թէ ինչ նշանակութիւն ունեցաւ կամ ինչ արդիւնք տուեց այդ հրովարտակը:

Խօսքի ազատութիւնը, որ միաժամանակ նաև նշանակում էր և՛ մամուլի ազատութիւն, գոյութիւն ունեցաւ միայն 2—3 շաբաթ, երբ մարդիկ հրապարակութիւն ստացան ազատուելու լեզուի վրայ զընուած անողորմ կապանքներից և իրենց միտքն արտայայտելու հրապարակաւ, առանց քաշուելու, առանց կեղծելու: Հօկտ. 17ից յետոյ դեռ մի ամիս չանցած՝ նոյն իսկ Պետերբուրգում անդի ունեցան մի քանի լրագրողների փակումներ, իսկ դաւաճական քաղաքներում և գիւղերում ոստիկանութիւնը «բարեհաճել» սկսեց չափաւորելու միտինգներում խօսող ծառախօսների լեզուն, գտնելով որ «սանձարձակ քարոզութիւնները տեղի կտան անախորժութիւններին»: Այդպիսով խօսքի ազատութիւնը ինքն ըստ ինքեան, որպէս վստահար, յետ խլուեց: Այսօր չէք գտնիլ Ռուսաստանում և ոչ մի լրագիր, որը իրաւունք ունենար Եղորտի լեզւից ջոկ որ և է լեզու գործածելու և կամ չէք գտնիլ մի մարդ, որը առանց բանտարկուելն աչք տունելու յանդգնէր հրապարակաւ երկու խօսք ասել պետական քաղաքականութեան վերաբերութեամբ:

Սակայն արժանազատութիւնը ներանդից աւելի երկար չապրեց: Մի շարք շրջաբերականներին (որոնցով սահմանափակում էին ժողովրդական գումարումները, միթիւնները, բանւորական խորհրդակցութիւնները ևն.) յաջորդեց «պատերազմական զրուցութիւնը» կամ «սաստկացրած պաշտպանութիւնը», որի մէջ գտնուում է այսօր համարեաւ ամբողջ Ռուսաստանը և որի ղօրութեամբ մի քանի հոգուց աւելի մարդկանց համախմբումը խափն արգելւում է, հակառակ դէպքում ղեկավարի սուխը կամ կծղակի սուրը կը շողշողան նրանց գլխին: Գումարման ազատութիւն, դա մի վստահութիւն երազ էր իսկապէս, որ բանակալութեան յաջորդուեց ժամանակաւորապէս խեղդել:

Այժմ թիւննեւրի ազատութիւն (որա հետ միասին և՛ գործադուլի): Սա այն հետեւանքն ունեցաւ, որ ոստիկանութիւնը հրապարակութիւն ձեռք բերեց ընդունելու մարդկանց գործերը և արձանագրելու նրանց անունները, վա՛յ այն մարդուն, որ համարձակուել է հրապարակաւ աչքի ընկնել որպէս «անախորժութեան»: Նա այսօր առօր-փառօր կառաջնորդուի դէպի: Բանաւ: Այժմ, ոստիկանութիւնը բացէ ի բաց արգելում է քաղաքական որ և է յառաջագիւ միութիւն: Առ այժմ թոյլատրում են միայն միապետական և չափաւոր միութիւնների կազմակերպումներ: Իսկ երկաթուղային, պօստ-հեռագրական և այլ գործադուլներին մանակցողներից հազարներով բանտարկւում են, ծեծի ու փետի ենթարկւում, ծառայութիւնից արձակուում:

Խղձի ազատութիւնը համեմատաբար աւելի բաղդաւոր էր, որ դեռ չի ծնած էլ մեռաւ: Այդ ուղղութեամբ ոչ մի քայլ չէ տունուել դէպ յառաջ:

Այն է և բնական արանի անձեռնմը: Խելիութիւնը այսօր ամենալայն չափով գործադրւում է կեանքում: Բոլորովին հակառակ մըտքով: Չէք գտնիլ Ռուսաստանում մի անկիւն, ուր այս րոպէիս հատ-հատ կամ խմբական ձերբակալութիւններ տեղի չունենան: Իսկ խուղարկութիւնները առասպելական չափեր են ընդունում բովանդակ Ռուսաստանում, ամենաշնչին պատրուակով ցարի չինովնիկները՝ կատարում են ամաշխարհ կողպուտներ, բոլոր բանտերը, կառավարական շինութիւնների նկուղները, ոստիկանատները և միջնակարգ ու բարձրագոյն դպրոցները լիկ լիքն են ձերբակալուած երիտասարդներով, առանց սեռի խտրութեան: Ահա մեր վաշելած քաղաքացիական ազատութեան հիմունքները:

ԻԿԻՏԵՐ

25 Փետրուարի, 1906

ԱՆԱՊԱ

ԲԱԹՈՒՄԻ ՎԵՐՋԻՆ ԳԵՊԵՐԻ ԸԹԹԻ

Բաթումը թէև վարչական տեսակէտից մի առանձին նահանգ է, բայց աշխարհագրական տեսակէտով իսկապէս քաղաքային նահանգի շարունակութիւնն է կազմում: Այս կողմերի տիրապետող ազգաբնակչութիւնը վրացիներն են, մանաւանդ թրքացած վրացիները, որոնք թէև կրօնով մահմեդական են, բայց դեռ պահած են իրենց լեզուն և վրացական բոլոր բնորոշիչ յատկութիւնները:

Բաթումը Բագուի շտեմարանը լինելով՝ վերջին տարիներս այստեղ հաւաքուած էին մօտ 10,000 բանւորներ, որոնք աշխատում էին երեք մեծ գործարանների մէջ՝ Ռօզնիլդի, Մանթաշեանի և Խաչատրեանի: Գործաւորական շարժումները համեմատաբար կովկասի ուրիշ քաղաքներէն աւելի շուտ դարգացան այս քաղաքին մէջ. երեք տարի առաջ էր, որ 40 զոհ էին տուելոյն բանւորները իրենց իրաւունքների պաշտ-

պանութեան համար: Երբ բիւրոկրատիայի պարծանքը եղող զինուորական ուժը լիջուր փշուր եղաւ: Մանչուրական դաշտերում և յեղափոխական ալիքները կոհակների փոխակեցան, Բաթումը առաջին քաղաքներից մէկը եղաւ, որ յառաջ նետուեց՝ ինչպիսի յեղափոխական շարժումը: Սկզբում այդ շարժումները արտայայտուեցան՝ գործադուլներով՝ որոնք աւելի քաղաքական, քան անտեսական բնուածութիւն ունէին: Ինչ որպէս կուզի, որ բանւորների և գործարանատէրների ընդհարումների ժամանակ, բիւրոկրատիան շարունակ բռնում էր այս վերջինների կողմը, բայց անսնելով որ այդպէս գոյաւ պիտի լինէր խորտակել գործարանական ուժը՝ նա բացէի լայն պահանջներ գործարանատէրներից որ իրենց գործարանները փակեն, որովհետեւ Բաթումը արտադրում էր յեղափոխական մի հնոց: Ամենից առաջ փակուեց Ռոզնիլդի գործարանը՝ յետոյ Խաչատրեանինը և ամենից վերջը, սրանից 6 ամիս առաջ, Մանթաշեանինը: Հետեանքը այն եղաւ, որ գործաւորների մեծ մասը ուրիշ տեղեր ցրուեցան գործ ձարելու: Համար Զմուռնամ ասել, որ 10 հազար գործաւորից մօտ 7 հազարը վրացի էր, իսկ 3 հազարը հայ վերջիններս մէջ մեծամասնութիւն կազմում էին Հնչակեանները:

Հոկտեմբեր 17ի մանիֆէստից յետոյ Բաթումը իրաւ որ յեղափոխական մի փառաւոր դարձաւ՝ Սոցիալ-Դեմոկրատներ, Հնչակեաններ, Գեղեարտիստներ, և այլն, համերաշխաբար եռանդուն կերպով գործել ըսկընցին, շատ ժամանակ չանցած քաղաքը իր շրջականերով յեղափոխականների ձեռքն անցաւ: Յեղափոխական կուսակցութիւնների ներկայացուցչական ժողովն էր որ ամեն բան վարում և կարգադրում էր, ինչպէս էին գործադուլները և խանութների բացել ու փակելը, և այլն:

Դեռ հազիւ ընկեցիան դուրս բարձրացրած՝ Բաթումի փողոցները լցուեցան խուլիգան «հայրենասերներ», որոնք ուրիշ քաղաքներից յանձնարարուած եկւորներ էին, բաղկացած ռուս ժողովուրդի տակաւնից, որոնց շարքերի մէջը մասն և տեղական սրիկաները, բիւրոկրատիան կարճ ժամանակի մէջ դրսից 200 խուլիգան լցրեց քաղաքը և նպատակ ունէր թելադրել իր այդ հարազատ գործիքներին, որ գործի սկսեն՝ այրել, կողոպտել, սպանութիւններ անել, որպէս զի այդպիսով զինուորական միջամտութիւն յառաջ բերի քաղաքացիների և տեղական իշխանութեան միջև: Սակայն քաղաքական ժամանակ անցաւ և տեղական իշխանութիւնները չհամարձակուեցան գործնական մի քայլ անել այդ ուղղութեամբ՝ միշտ երկիւղ կրելով յեղափոխական ուժից, որ կազմ ու պատրաստ կեցած էր:

Այդ ժամանակներում էր որ քաղաքային տան մէջ մի մեծ միթինգ կայացաւ, ներկայ էին քաղաքագլուխը, գործօն կուսակցութիւնների ներկայացուցիչները և ստուար թիւ ժողովուրդի: Ընդհանուր որոշում եղաւ՝ որ երբ պատգամաւորներ քաղաքագլխի հետ միասին նահանգապետին ներկայանան և պահանջեն, որ քաղաքի պահանջութիւնը յանձնուի քաղաքացիներից բաղկացած 100 հոգիից զինուած մի միլիցիայի՝ որոնցից 30ը, փակագծի մէջ ասենք, Հնչակեան պիտի լինէր: Այդպէս էլ եղաւ, պատգամաւորները քաղաքագլխի հետ միասին ներկայացան նա-

հանգապետին և դրին քաղաքացիների պահանջը: Նահանգապետը սկզբունքով ընդունեց եղած առաջարկը և քաղաքագլխին յանձնեց այդ ուղղութեամբ մանրամասն մի ծրագիր մշակել և իրեն վաւերացման ենթարկել: Պատգամաւորները վերադարձան և նահանգապետի համաձայնութիւնը յայտնեցին, միթինգին և վերջինս անմիջապէս ընտրեց 14 հոգուց բաղկացած մի յանձնախումբ, որ հերթական խնդիրները պիտի կարգադրէր, շաբաթը երկու անգամ ժողով ունենալով: Յանձնախմբի անդամներից 4ը հայ էին, և որոնց մէջ աչք ընկողն էր Հնչակեան կուսակցութեան տեղական ներկայացուցիչը, որին և յանձնուեցաւ միլիցիայի պահանջութեան համար 45 հազար ռուբլի ծախքերի աղբիւրներ գտնելու և նախահաշիւ ներկայացնելու գործը: Սա տեղի էր ունենում հոկտեմբերի 28ին: Դեռ խորհրդակցութիւնները չլիւրջացած՝ հիւանդանոցի հեռախօսը սկից արագ արագ հնչել: Յանձնաժողովին անդամներից Պր. 2-ն հեռախօսի պատասխանը առնելու դնաց և անմիջապէս վերադառնալով յայտնեց թէ կոտորածը արդէն սկսուած է և սպանուած են 7ը հոգի, ու շատերն էլ վիրաւորուած: Միթինգը ցրուեցաւ, և որովհետեւ Յանձնաժողովի անդամներից մեծամասնութիւնը կուսակցական ներկայացուցիչներ էին, ամէնքն էլ վազեցին իրենց կուռղ ուժերը կազմակերպել՝ գուրս հանելու համար. դա ժամի 8-ն էր, երկուրեքսուն ժամը 10ին ամբողջ Բաթումը արդէն ոտքի ելած՝ հայ, վրացի, աչար թափուեցան քաղաքային տան բակը և դահլիճը: Սկսուեցաւ հսկայական միթինգը, որի ընթացքում պարզուեց այն իրողութիւնը, որ կոտորածը սկսել էին կողակները որոնք առանց հրադէտի և միայն դաշոյններով զինուած՝ 2-3 հոգիներից բաղկացած խմբերով քաղաքի զանազան մասն էին ցրուած և հանդիպածին դաշոյնի մահաբեր հարուածներ տալիս, որպէս զի իրանց եղեռնագործական արարքին ոչ ոք վկայ չմնայ, այդ կերպով 14 հոգի սպանուել և սրդէն հիւանդանոց էին փոխադրուել:

Միթինգը որոշեց երբեք հոգուց բաղկացած մի պատգամաւորութիւն ուղարկել նահանգապետի մօտ հետեւեալ առաջարկներով: 1) Անմիջապէս կողակներին փակել զօրանոցներում, թող չտալ որ գուրս գան և ապա՝ Ֆիլիքական կարեւորութեան ամեն թող տուած արագութեամբ նրանց հեռացնել Բաթումից, 2) առանց որ և է արգելքի քաղաքային միլիցիան կազմակերպուի և գործի գլուխ անցի: Հակառակ պարագայում պիտի փակուէին բոլոր խանութները և երկաթուղային, հեռագրական, հեռախօսական, ին աւտօբուսական բոլոր գործաւորները գործադուլ պիտի անէին: Նահանգապետի պատասխանը եղաւ, որ ինքը իսկոյն և եթ կողակներին փակել կտայ իրենց զօրանոցների մէջ, և այդպէս էլ արաւ, իսկ ինչ որ վերաբերում է քաղաքից նրանց հեռացնելու խնդրին, դա, ասաց, կախումն ունէր միայն փոխարքայի իրաւասութիւնից, հետեւաբար ցանկութիւն յայտնեց իր կողմից մի պատգամաւոր ուղարկել Վորոնցով-Գաշկովի մօտ այդ խնդրի վերջնական կարգադրութեան համար, ու դրան համար էլ յեղափոխական կուսակցութիւնների ներկայացուցիչներից խնդրեց, որ նրանք երթեկեկութեան հնարաւորութիւն տան այդ պատգամաւորին: Յեղափոխականները հա-

մաձայնեցան և արամադրելի արեցին մի տեղաշարժ և մի վազո՞ն, — պատգամաւորը մեկնեց թիֆլիզ, իր հետ ունենալով և՛ բաթումի քաղաքագլուխը: Առանց պատասխանին սպասելու, ընդհանուր գործադուլ յայտարարուեց և խանութները բոլորն էլ փակուեցան: Սա էլ տեղի էր ունենում հոյեմբերի 28ին:

29ի առաւօտեան քաղաքը սոսկալի իրարանցումի մէջ էր, չափազանցութիւն չէր լինի, եթէ ասեմ՝ թէ ամբողջ քաղաքը ոտքի էր ելած — յեղափոխական կուսակցութիւնները շարան շարան կանգնած իրենց զինւորներով և դրօշակներով, ժողովրդի բոլոր խաւերի հետ միացած՝ մի մեծ թափօրով հիւանդանոց էին դիմում ապստամբներին իրենց վերջին յարգանքը տալու և յուղարկաւորութեան կարգադրութիւնները անելու: Նահանգապետի դաւաճանութիւնը պալլ եղաւ, երբ ճանապարհին երեւիլ սկսան բաւականին թուով կողակներ, որ ասել է թէ նրանք փակուած չէին եղել իրենց զօրանոցների մէջ, ինչպէս որ խոստացուած էր և, բացի դրանից կողակների 15 հոգինոց մի խումբ յառաջ անցաւ և սկսեց կրակ պարպել թափօրաւորների վրայ: Ժողովուրդը հիւանդանոց երթալու փոխարէն՝ քաղաքային տունը վերադարձաւ և սկսաւ միմիկը բոլոր կուսակցութիւնները պարտաւորուեցան դուրս բերել իրենց ուժերը: Ասրգուեցաւ Գործադիր մի յանձնախումբ: Յեղափոխական բարձրագոյն խորհուրդը կամ Գործադիր Յանձնախումբը բաղկացած էր 4 հոգուց, որի անդամներից մէկն էր Հնչակեան կուսակցութեան տեղական ներկայացուցիչը: Որոշուեց քաղաքի պաշտպանութիւնը յանձնել յեղափոխական ուժերին, Հնչակեան զինւորների թիւը 70ի էր հասնում և 3 թաղ յանձնուեց նրանց պաշտպանութեան, ընդհանուր հրաման էր որ ինքնապաշտպան խմբերը որ և է յարձակում չպիտի անէին, եթէ բիւրօկրատիայի վիժուածները տեղիք չը տային:

Գիշերը անցաւ խաղաղ. բայց որովհետեւ լուրեր էին պտտում, թէ հետեւեալ օրը խուլիգանների կողմից յարձակում պիտի լինէր և ամբողջ քաղաքը կոտորածի պիտի մասնուէր ուստի յեղափոխական բարձրագոյն խորհուրդը որոշեց որ յեղափոխական բոլոր ուժերը հրապարակ դուրս գան և քաղաքի զանազան մասերը գրաւեն՝ ինքնապաշտպանութեան նպատակով, — շինուեցան և՛ բազմաթիւ պատնէշներ: Ամեն նախազգուշութիւն ձեռք էր առնուած, և այդ բանին հիմք էր ծառայիլ այն հանգամանքը, որ նահանգապետը բերդից եօթը անգամ թնդանթ արձակել տուեց, որ ասել էր թէ բաղձը դուրս էր պատերազմական դրութեան մէջ:

Յեղափոխականները քաղաքի զանազան մասերը գրաւած՝ ինքնապաշտպան դիրք ունէին, հակառակ դժբախտ՝ զանազան սպաներ և զինւորներ ծագուած լքանում էին ժողովրդի մէջ և աշխատում ընդհարման պատճառներ ստեղծել, այդ կարգի սպաներից մի բանիսը սպանեցին 15 մարդ և դիրքեր բռնած շարունակ հրացան էին պարպում: Մեր «հայրենասէր» սպայ իր գլխին առած մի խումբ կողակներ, յարձակում գործեց մի տան վրայ, ուր յեղափոխական մարտիկները պատրաստ կեցած էին: Որոտացին ուռմբերը, սպանուեց սպան և երկու զինուոր, մնացեալները կատաւ պէս թողին և փախան: Վազմուած էր և՛ «Կարմիր Խաչ» ի ընկերու:

Թիւն՝ քաղաքի պատուաւոր տիկիւններից, որոնք ամեն խնամք տանո մ էին վերադարձաների մասին, — բիւրօկրատիայի գործիքները այնքան ճիշդ դուրս եկան, որ մինչև անգամ նրանցից երկուսին տեղն ու տեղը սպանեցին:

Երբ նահանգապետը որոշակի կերպով հասկացաւ թէ ուժի գերազանցութիւնը իր կողմն է, այն ժամանակ մի սպանուողիւր — հրաման ուղարկեց՝ քաղաքագլխի օգնականի միջոցով՝ յեղափոխական ուժերի Գործադիր Յանձնախումբին, պահանջելով — 1) մինչև ժամի 3 պատնէշները վերցուին, 2) գործադուլը դադար առնի և 3) յեղափոխականները իրենց դիրքերից բաշտին: Հակառակ դէպքում քաղաքը պիտի ենթարկուէր ուժաւորութեան:

Յեղափոխականների պատասխանը եղաւ, որ իրենք պատրաստ են պատնէշները վերցնել և գործադուլը դադար առնել տալ, եթէ նախ կվերացուի պաշարման դրութիւնը և ժողովրդի պաշտպանութեան համար դրական ապահովութիւններ կտուի: Նահանգապետը այդ խոստումը տուեց, — երբ պատնէշները վերացան և յեղափոխական ուժերը իրենց դիրքերը թողեցին, շատ ժամանակ չանցած՝ սկսուեցաւ մի սոսկալի խուղարկութիւն, — սպաները կողակների խմբերի գլուխը անցած՝ ահագին բազմութեամբ լցուեցան քաղաքային տունը, ամեն ինչ տակն ու վրայ արեցին, խորտակեցին դռները, ջարդեցին կահ կարասիքը փշուր-փշուր արեցին գանձարար՝ կողոպտելու: Նպատակով, բայց բարեբախտաբար մէջը ոչինչ չկար: Սոսկական անհաստների տները խուղարկութեան չէին երթարկում, այլ բանդում, կողոպտում էին ինչ որ ձեռքներն էր ընկնում և կարող էին գրպանները դնել, — սոսկ լժը աննկարագրելի էր: Մեր նոր ժամանակի վանդալները երեք անգամ խուղարկութեան ենթարկեցին «Չերնօբուկ Ղէստնիկ» թերթի խմբագրատունը, միայն կահ-կարասիքը չէ որ կտոր կտոր արեցին, այլ և փշոցեցին մեքենաները, խեղձ խմբագրի աշխատանոցը մտնելով՝ յափշտակեցին նրա բոլոր հանդերձեղենները, և խուղարկու կողակների կատաղութեանը այլևս չափ չկար, երբ տեսել էին որ խմբագիրը փախել էր ու այդպիսով չէին կարողացած նրան սպանել, ինչ որ իրենց մասնաւոր ցանկութիւնն էր եղած: Ցարի մարդակերպ հրէշները ուղղակի հողին հաւասարեցրին այն տունը՝ որտեղից որ ուռմբ էր նետուած: Ամբողջ երեք օր քաղաքը պաշտօնական խուղարկութեան, կամ աւելի ուղիղն ասած, կողոպուտի ենթարկուեց: Կողոպտուեցան գրեթէ բոլոր խանութները, զինւորները ջոկատներով քաղաքի փողոցները կտրելով՝ անընդհատ հրացաններ էին պարպում, — ամեն ինչ մատնուած էր սարսափի: Թէեւ այդ ժամանակ փոխարքայի մօտ գնաղող քաղաքագլուխը վերադարձել էր և հրահանգ բերել, որ պաշարողական դրութիւնը վերացուի, բայց բերդապահ զինւորների հրամանատարը պատասխանեց, որ այստեղից ինքը հրամաններ կարող է ընդունել միայն կայսրից, և արհաւիրքը շարունակուեց:

Այդ սոսկալի դրութեան առաջն առնելու համար, ժողովուրդը որոշեց անմիջապէս նորից պատգամաւորութիւն ուղարկել փոխարքայի մօտ՝ թիֆլիզ և նրան բացատրել իրերի դրութիւնը ու դարման խնդրել: Պատգամաւորութեան անգամները եղան քաղա-

քաղաքում, իր օգնականը և երկու աղվեցիկ քաղաքացիներ, որոնցից մեկն էր Հնչակեան կուսակցության ներկայացուցիչը:

Այսպիսով թիֆլիսյան մեկնեց դեպի Թիֆլիզ: Զանապաղհի մի ուսուցիչ, որ մասնակցել էր բերդապահ զինվորների արած ժողովին, ծածուկ կերպով պատգամաւորներին յայտնեց թէ ինչպէս նախագծուած էր ձերբակալել պատգամաւորներին անդամներին՝ իրենց վերադարձի ժամանակ, նրանց հետ և՛ յեղափոխական բուրձ պարագլուխներին:

Այսօրոցով—Դաշկովի հիւանդութեան պատճառով պատգամաւորներին աւելի քան 40 րոպէ ունկնդրութիւն տուեց Մալաման: Երբ պատգամաւորները պարզեցին նախագահական և զինուորականների արարքը, նա պատասխանեց, որ իր առած տեղեկութիւնները ճիշդ հակառակն էին պատգամաւորների ասածներին, վերջիններս խնդրեցին որ ինքը անձամբ գայ և քննութիւն բանայ: Գործերի շատութիւնը պատճառ բռնելով՝ նա չուզեց գալ, բայց համաձայնեց որ իր փոխարէն անաշտ մէկը ուղարկէր քննութեան:

Արհաւիրքի մէջ թողուած՝ այդ «անաշտ» բռնիչին՝ ենք սպասում: Շարունակութիւնը կը գրեմ: Եթէ ժամանակս ների, աւելի ուղիղն ասած՝ եթէ կենդանի մնամ կամ չբռնուեմ:

ՈՍՏԱՆԻՎ

10 Դեկտ. 1905

ԲԱԹՈՒՄ

ՆԱՄԱԿ ԹԻՖԼԻՋԻՑ

Մեր զորամասի զառանգութեամբ մինչև վերջնա մի կարգ մտածողներ այն կարծիքն էին յայտնում թէ թաթարական շարժումները ոչ այլ ինչ էին, եթէ ոչ՝ ճնշուածների, հարստահարուածների զինուոր բողոքի ձայն իրենց հարստահարող հայ տարրի դէմ: Սկզբից ի վեր մեր հակակարծիք էր այդ մտքին, յենուելով այն բացօթյա իրողութեան վերայ, որ հայ ժողովրդի մեծամասնութիւնն էր որ ուղղակի յափշտակութեան էր ենթարկուած զանազան կարգի աղաների, բէկերի և խաների կողմից: Եւ մենք դիտում էինք որ թրքա-հայկական ընդհարումները ըստեղծողը և առաջ բերողը ուղղակի ուսուրիւրական էր, նա էր շարժիչ ոգին հայա-թրքական ամբողջ զորամասի: Հետզհետէ եկող լուստրանութիւնները որոշակի կերպով ցոյց տուին մեր կարծիքի հիմնաւորութիւնը: Այս ամիս մի կողմ թողնելով խնդրի ընդհանուր կողմը՝ անցնենք մեր քաղաքին:

Թէ սկզբից ի վեր Գօլիցիներն ընդհանրապէս ետեւում էին խաղեր խաղացին Թիֆլիզի աղաքանակ-չութեան գլխին ընդհանրապէս, հայերին՝ մասնաւորապէս—գրանց բացատրութիւնը մեզ շատ հեռու պիտի տանէր, միայն այսքանը պիտի նկատենք, որ բերդապահ զինվորներին շատ անոթութիւն էր որ քաղաքի մէջ ամփոփուած ինտելիգենտ ոյժը Բարթոլոմէան մի գիշերի ենթարկուէր: Խեղաւ կառավարութիւնը կարծում էր թէ զրանով մի մեծ հարուած տուած կլինէր յեղափոխական գործին: Ոչ մի միջոց չի ստացրեց կառավարութիւնը, որ Թիֆլիզից էլ մի Բա-

գու, մի Նախիջևան առաջ բերէր, բայց նա այդ պատեհութիւնը չունեցաւ, ուղիղն ասած՝ մի այդպիսի փորձանք իր ուժերից վեր տեսաւ: Եթէ մեծ չափով այդ չը յաջողուեց բերդապահային, դէմ փոքր չափով նա իր սիրած դադափարին աշխատեց մարմին տալ:

Թիֆլիզի թաթար աղաքանակչութիւնը այնքան քիչ էր, համեմատելով հայերի հետ, որ նա երբեք իր մարմին անգամ չէր կարող անցնել յարձակում գործելու հայերի վրայ, եթէ բիրտկրատիայից ազգութեամբ և իրախոսութեամբ չլինէր: Եւ հէնց դրա համար՝ ընդհարման օրերից դեռ առաջ՝ քաղաք էին լըցւում Բարձալուց ապսպրուած թուրքերը: Սրանք գալիս էին նախապէս համադուած լինելով, որ թէ՛ «տէրութեան» հաճելի պիտի լինէր իրենց արարքը և թէ՛ կարող կլինէին լաւ թալանով յետ գառնալ:

Նոյեմբերի 20ից սկսած «Հէյման Բաղար» և իր շրջականները թաթարական մի ծով էին ներկայացրում, դրսից եկողների թիւը տեղացիներից երեք-չորս անգամ աւելի էր:

Մեր՝ Հնչակեանիս թաթարի դէմ զէնք չենք բարձրացնում աղաքանական ցեղական և վրէժխնդրական տեսակէտից, երբեք մենք կուրում ենք միայն այն պատճառով, որ թաթարները ներկայ պարագաներում ուսուրիւրական հարազատ գործիքն են: Հանդիսանում, և, հեռաւարտ անդորութեան, պարտութեան մէջ դրնելով թաթարներին՝ մենք հարուածում ենք բերդապահային ու խախտում բռնապետութեան սիւները: Ուրիշ խօսքով՝ մեր կոխը հանդիսանում է մի ձեւը, մի երեսը այն ընդհանուր կուռի, որ առաջ է գնում ամբողջ Ռուսիայի մէջ, որ դէմ առ դէմ կեցած են մի կողմից բռնակալութիւնը իր խաւարային տարրերով և միւս կողմից յեղափոխական ոյժը իր բոլոր ստորաբաժանումներով:

Եւ մենք ստիպուած էինք զէնքի դիմել, որովհետեւ թշնամին մեր դռան առաջն էր չորած, հրացանը ձեռքին, պատրաստ մեր վրայ խուժելու:

Այստեղ մենք առանձին անդրադառնալ չունենք Թիֆլիզի կուռի բողոք մարմաններին: Եւ մենք դիտում ենք որ տեղական լէգալ մամուլը ամեն ինչ իւր գոյնով և ձեւով դուրս բերեց: Մեր միայն այսքանը կասենք, որ այդ զէնքի օրերում Հնչակեան զինվորները իրենց պարտականութիւնը լիովին կերպով կատարեցին: Ոչ միայն նրանք իրենց քաղաքացիութիւններով ամենագործող աղաքաներից մէկը հանդիսացան թուրք խուժանին յետ մղելու և պարտութեան մէջ գնելու, այլ այդ կուռի միջոցին, գնդակների փոխադարձ տարափի տակ, նրանք ժառանգեցին յարգանքը իրենց պատերազմի թշնամիներ ի վերջիններս տեսան թէ ինչպէս Հնչակեան զինվորը զիտէ քաղաքից: Զանգի նշանը չբաժանել ասպետական հոգու մեծութիւնը «Զանգի նշան» կողմ զինվորների տըղամարդու թիւնը անջնջ կը մնայ թաթար մարտիկների և խաւանի յիշողութեան մէջ, ու նրանք շատ առիթներ կունենան կրկնելու թէ տեղական ամեն պաշտօնեաներից և ամեն մարդից աւելի մէկը իր կաննը միշտ կարող է վստահել «Զանգի նշան» կրծքին ունեցող զինվորին, որովհետեւ նրանք ունին իրենց ասպետական աւանդութիւնները—Գօլիցիներն խող-թող բազուկները կանգ առան, երբ իրենց առաջը

տեսան պաղատող մի կին: «Հէլման Բազար»-ի, «Ալիւրի մէյտան»-ի մէջ պատահեցնելի վրայ կռու կեցող և կուր տապը առաջ տանող «Զանգի նը-շան» ունեցողները գիտէին գնդակահարել, բայց և այդ րոպէին պաշտպանի դերի մէջ մտնել, երբ իրենց առաջը կ'անգնում էր թայլը, պաշտպանութիւն խընդրողը, մարդը: Ու այսպէս յառաջ սղիմութեան բարեկամների ընդհանուր ջանքերով կարողացանք վանել ընդհանուր թշնամուն՝ բիւրոկրատիայի այդ անգիտակից գործիքին, բայց ամեն ինչ ժամանակաւոր է: Բիւրոկրատիան այժմ, ինչպէս ուրիշ տեղ, մեզ մօտ էլ մի առանձին հրճանքի մէջ է, բայց հեռու չէ ժամանակը, երբ նորանոր դէպքեր մի անգամ էլ կ'գան ահելու որ՝ «ծերուկ գառամաւլ, քեզ մնում է միայն գերեզմանիդ չափը տալ գերեզմանաւորին»: Այդ օրն էլ կը տեսնենք:

ԳՐԻԳՈՐ

Փետր. 13, 1906

ԹԻՖԼԻՉ

ՍԵՒ ԾՈՎԻ ԱՓԵՐՈՒՄ

Սեղանում քաղաքական դէպքերն այնպէս արագ յաջորդում են միմեանց, որ հնար չի լինում՝ գէթ հարեանցի գաղափար տալ արտասահմանի ընթերցողներին մեր առօրեայ բոլոր անցքերի մասին: Այնուամենայնիւ կը փորձենք մի թուուցիկ տկնարկ գցել Սեւ Ծովի ափերի վրայ, սկսած Բաթումից մինչև Կերչ:

*) Չնայած ԲԱԹՈՒՄԻ զինուորական նահանգապետի և բերդապահ զօրքերի կառավարչի ձեռք առած ամենակտրուկ միջոցներին՝ ճնշելու համար Բաթումի յեղափոխական կազմակերպութեանց զօրեղ շարժումները, չնայած բազմաթիւ կողակների էլ ներկայութեանն այն տեղ, որոնք իրաւունք են ստացել բոլոր միջոցներով խանգարելու յեղափոխական գործունէութիւնը — այնուամենայնիւ Բաթումը գտնւում է յեղափոխականների ձեռքին, որոնք և՛ վարում են քաղաքի բոլոր գործերը: Ու Ս. Ս. Գ. Բ. Կ. Բաթումի կոմիտէտի, Հնչակեանների և այլ յեղափոխական մարմինների գործօն ոյժերը ամիսներից ի վեր տիրում են և՛ երկաթուղու գծին, որի վրայ գնացքները երթնեկում են՝ միայն յեղափոխական նպատակների համար, մինչև քուլթայիս, որտեղ նոյնպէս ազգաբնակչութիւնը բարձրացրել է ապստամբութեան գրօշը և մի քանի ամիսներ է, ահա, ինչ փառաւոր կռիւ է մղում ցարի կառավարութեան դէմ և որտեղ վերջինս բոլորովին ուժասպառ է եղել: Բանն այնտեղ հասաւ, որ Կովկասի փոխարքայ Վորոնցով—Դաշկովը ցարին ուղղած իր հեռագրում պարզապէս ասում է, որ կ'առաջադրուի թիւնն անգոր է ճնշելու Բաթումի յեղափոխական շարժումը և ինքն այլ ևս ազատ է համարում իրան որ և է պատասխանատուութիւնից:

ՍՈՒՌՈՒՄԵՆ էլ անցեալ տարուայ Նոյեմբերից ըսկըսած գտնւում է Ու. Սոց. Գէմոկրատների, Հնչակեան-

(*) Մեր քղաքացի նկարագրողները միայն յետադարձ նշանակութիւն ունի, որովհետեւ այդ տեղերում թեակցիան այժմ տիրապետող է:

ների և ուսն սոց. յեղափոխականների ձեռքին: Տեղական ազգաբնակչութիւնից ընտրուած միջոցիւն և քաղաքային վարչութիւնը պահպանում են Սոխումում օրինակելի կ'որդ ու կանոն: Թողութուրդն ազատ է որ և է պետական տուրքից: Որքան էլ որ կառավարութիւնը փորձում էր հասարակութիւնը իր կողմը որսալ — այդ նրան չէր յաջողում: Թողութուրդը միանգամ ընդ միշտ վճռել է թե ու թիկունք լինել յեղափոխական կազմակերպութիւններին:

Նոյն գրութեան մէջ է և ԳՈՒԴԱՌՏԸ, որտեղ Աբխազ, հայ, յոյն, ուսն և թուրք տարրերը համեալաբն ու միաբան հոգում կառավարում են թէ՛ քաղաքը և թէ՛ շրջակայ բազմաթիւ գիւղերը: Նախկին օստրկանական կազմը այստեղ կոմսովին աւելի է տուել Ռուս. Սոցիալ-Գէմոկրատ և Հնչակեան կուսակցութեան վարիչ մարմինն, որոնք միաժամանակ տանում են և՛ գաղապատական գործերը՝ վերջերս կառավարութիւնը փորձեր է անում զինելու Գուգաուարի շրջակայի մի քանի առաջակարգայ աբխազներին և գրգռելու նրանց յեղափոխականների դէմ: Փորձերը դժբախտաբար, յաջողութեան նշաններ են ցոյց տալիս:

ՍՕԶԻՈՒՄ՝ անցեալ Գեղեանքների 27ին՝ 5—6000 սպառնալիքներով յեղափոխականներ յարձակում են տեղի զօրանոցների վրայ և մինչև Գեղեանք. 31ի գիշերը կատաղի կռիւ մղելով՝ յաղթում են կողակներին ու զօրքին, իրում են նրանց հրացանները, 3 թնդանթ և բոլոր ռազմամթերքը: Չերբակաւելով բոլոր կառավարական պաշտօնեաներին և զօրապետներին՝ բանտարկում են: Ապա տիրելով պետական բոլոր հիմնարկութիւններին, տեղական բանկից գրաւում են 200 000 ռուբլի առ ձեռն գրամ: Այրուած է օստրկանատունը, հեռագրական թելերը կտրատուած և հազորակցութիւնը դուրսի աշխարհի հետ ընդհատուած: Մարդկային զոհերի թիւը հասնում է 100ի, որից 34ը յեղափոխականներ են: Ներկայումս մի զբաղակիր կանգնած Սօչիի առաջ, ապառնում է սլմբակոծել քաղաքը:

ԳԱԴԴԱՆ և ԱԴԼԵՐԸ նոյնպէս գտնւում են Սոց. Գէմոկրատների ձեռքին:

ՆՕՎՕՐՕՍԻՅԱՎՈՒՄ թէև յեղափոխական կազմակերպութիւնները (Սոց. Գէմոկրատ, Հնչակեան և Սոց. Յեղափոխականները) գրաւել էին խիստ կարեւոր դիրքեր, բայց մի կողմից քաղաքն յայտարարուելով կառավարութեան կողմից պատերազմական զրութեան մէջ և ամենաեռանդուն կերպով զինաթափ անելով ազգաբնակչութեանը, միւս կողմից էլ մարտնաւերը սօտեցնելով՝ քաղաքին, կառավարութեանն յաջողուեց ճնշել վերահաս ապստամբութիւնը: Տեղի են ունենում խմբական ձերբակալութիւններ և ամենախիստ խուզարկութիւններ: Կեանքը բոլորովին մեռած է քաղաքում. ազգաբնակչութիւնը հեռանում է՝ մերձակայ քաղաքները:

ՆԱՊԱՆՍՆՆ սկզբից մինչև այսօր հնաբանութիւն ունի սգալուելու ազատ ու բազմամարդ միջինգներից, որտեղ յաջողութեամբ յառաջ է մղւում յեղափոխական պրօպագանդան: Ոստիկանութիւնն այստեղ ենթարկուած է ժողովրդի հեղինակութեանը և ինքն իսկ արձագանգ է տալիս յեղափոխական նպատակաւոր մարշարժումներին:

ԿԵՐԸԸ յայտարարուած է պատերազմական զը-
րութեան մէջ: Խուզարկութիւններ և ձերբակալու-
թիւններ աներեւակայելի չափերով. . . Սպասուում են
Ծայրագոյն Արեւելքից մի քանի գունդ զինուորների,
որոնց գալով դժբախտ կերպով կարող է մատնուել
բարբարոսական աւերմունքների . . .

Հ. Մ.

10 Փետրուարի, 1906

ՕՏԵՍԱ

Ն Ի Ի Ր Ա Տ Ի Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՈՒՇՏՈՒՄ Հանգանակել են հետեւեալ գու-
մարները, ուղարկած թաւրիգի Մ-դին:

Աստ. Սարգիսեան 50 դան, Աշ. Եղիկեան 50 դ, Տիկ.
Եւփ. Տաշիրեան 40 դ, Սէրգո Նաշնարածեան 60 դ, Ա. Մ. 20,
Մ. 20 դ, Ս. Յովսէփեանց 20 դ, Ս. Տէր Սարգսեան 30 դ, Սվա-
զովի 10 դ, Ա. Յորտատողեան 30 դ, Խո. Նաշնարեանց 10 դ-
ը, Բաքախանեան 10 դ, Ա. Յովսէփեանց 20 դ. Ար. Աղամբ-
զեանց 50 դ, Զոկաճուտ 15 դ, Ազատ 5 դ, Բեռի 10 դ, Գող-
թեան 10 դ, Աղաւել Յ. 100, Յ. Ս. 30, Ա. Ռ. 50, Յ. Գալստեան
25, Ա. Ռոստոմեան 20, Լոյս 20, Ե. Սիմէօնեան 20, Ոմ 5 դ
Մ. Գ. 5, Հ. Նազարից 5, Մի պաշտօնեայ 20, Յ. Յով-
Մուժամբարձի մի նրիտասարդ 5, Մուժամբարձի 10 դ.
Գումար 785 դան

ԾԻՆԱԼՈՏ Մ-դի գանձարանում ստացւել են.

«Վարի Բեռակ» խ. Վաճիճ, Զարմայր 1-ին քր., Միւ-
տիր, Աշոտ, Փաշայ, Վահան, Արծիւ, Մեհակ, Ժէյրան, Աղան
Տրդատ 50-ին և «Մուտակ» խ. Էզրաէլ 5 ք, Պիւլպիւս Ծա-
րոնիս, Զօհրապ, Պարթեւ 3-ին, ք, Կտրիճ, Աշոտ, Բաշասիրտ
Լուսազոյն, Մատանի, Արծաթ, Անվան, Մուրճ, Կիճ, Մարդին,
Ճրագ 50-ին և, Հրէշ 40 և, Բամի, Ոսկի 30 և, Մաթէս, Գաւա-
զան, Որսորդ, Հրացան, Կտրոն, Հաւաճայն, Աւետոյն, Իշխան,
Էմէթթիր 25-ին և, Մտրակ, Բարասիրտ, Զիւլիքոր, Լոյսասող,
Ալիք 20-ին և, Յաւաշ 15 և. «Չորակ» խ. Զարմայր, Արամ
1-ին ք, Վաղարշակ, Պարթեւ 50-ին և. «Նոր-Ժաղիկ» խ. Պի-
ղատոս 10 ք, Պողոս Առաքեալ, Վարազդատ 3-ին ք, Արշաւիր
Զօրեղ, Վաղգէն, Անդրանիկ 1-ին ք, Գուրգէն 50 և. «Ժաղկա-
զարդ» խ. Գայլ-Վահան 1 ք, Բոլակ 50 և. «Անի» խ. Ապառաժ
5 ք.

ՈՒՈՒՍԶՈՒԿԻ Մ. դի գանձարանում ստացուել են.

Անհաշտ խ. Վիթխար 10 լիւ, Վարուժան 2, Եփ-
րատ 3, Կրակ 2, Արարատ 2.

Մուրատ խ. Ապոստամբ 5, 2 լիւ, Ծեր. Ծառ, Պար-
թեւ, Լիւ 5-ին, լիւ:

Նէցուկ խ. Բոուրցը, Սեպօն, Արցան 1-ին ք, Ման-
եակ 2, Փալակ 3:

Կայծակ խ. Վառապապուհ, Վիշապ, Պղինձ 5-ին ք,
Միրոյ 3, Տահրակ 10, Հրաշ 1:

Արծիւ խ. Տրիփոն 5, Ծիծեռնակ 10, Կայծակ 10
Արմաիր 5 Մուր 2. Գ.ժր. 118 լիւ:

ՆՈՐ-ՆԱԼԱՆԱՆԳԻՍ Մ-դի գանձարանում
ստացւել են.

Թիւ 107 անդորրագրով Նո. 3ից 49 ք 5 և, Թիւ
108 անդ. Հ. Ա. 7 ք, Թիւ 109 անդ. Եղբ. Եղիպ-

տացիներից 50 ք, «Անի» դիւղի պատանիներից՝ Փայ-
լակ, Հրացան, Շանթ, Կայծակ և Վարդ 47 և, Կա-
ռապան 30 և «Հայրենասէր» խ. անդամ Թաթուլ 1,
Անի Գ. Բագրատունեան խ. հսկա. ամսվճ. 1. 40, Բա-
լու Գ. Արամեան խ. Ծաղիկ 50 և, Երկաթ 1 ք, Վը-
րժ 1. 40, Ազատ 1. 40, Ճինաւոր 70 և, Խոլէն 3 ք,
Հոգէաւ 1 ք, Աստուածառէր 1. 20, Զարմայր, Ուրուր
Արծրունի, Հրացան, Արարատ և Աշխատ 20-ին կօպէկ,
Արտակ 40 և, Ծերունի 50 և, Սուր և Պայծառ 40-
ական կօպ.

ՆՈՐ ԾԱՂԿԱԾ դիւղի երիտասարդ խ. 1905 Նոյեմբ. և
Դեկտ. ամսվճ. 14 ք — Արտաւազդ, Կրակ, Տրդատ, Լուս-
նեակ, Կարապոյուր Թաւր, Սուր, Գանակ, Ռափայէլ,
Կայծակ, Փալակ, Վարդգէս, Թիւֆէնի, Աշխատ. Զինա-
սէր և Ռանչապր 50.ական կօպ., Կարկուտ, Թիւրքիճի,
Պալատ, Վահրատ, Փալապոյուր Ե. Արեւիկ և Աղբիւր 40-
ական կօպ, Սուր և Ճրագ 60 ական և, Գաշոյն և
Հօգէաւ 1-ական ք. Գ.ժր. 136 ք. 32 և.

ԳԵՕՍԵԼԵՆՃԻՒ Մ-դի գանձարանում ստացւել
են.

Վաղարշ, Առիւծ, Կլակ, Պարոտ, Նոյ, Բազարատ, Յակոբ
Մատինը, Հեթում, Արշաւիր, Արթակ, Հայկակ, Միթթար, Կա-
մար, Նապտակ, Վահէ, Զիթնի, Մատաթիս, Արմենակ, Խոնաւ
Միհան, Ործին, Արա Գեղեցիկ, Աշոտ, Համ, Նիկողոս, Կլա-
շիկ 5-ին ք, Ռաքել եւ Վաղարշակ 8 ք, Սիւտոյ 15 ք, Բիւ-
զանդ, Սինճանեան, Զիւլիկ, Սիւմ, Արշակունի, Ալիշտն, Ծարտար
10-ին ք, Աստղիկ, Մովսէս 20-ին ք, Թեւեղանց, Տուրակ, Կամ-
բէթ, Շաւարշ, Արապոյ, Թուին, Ծան, Վահագ, Կովկաս, Եր-
կան, Մարթինի, Անախ, Արամշատ, Մատիտ, Հայկի 3-ին ք
Բամ, Ազոխ, Շողուն, Անակ, Վարազդատ, Թուլակ, Արամ
Արգոտ, Պարոն 4-ին ք, Մկրտիչ, Տելեյաք, Կոնդակ, Արտաշ,
Տարդաւ, Յամեթ, Լեւոն, Սմբատ, Նաւ, Նաւապետ, Պատանի,
Հայկակ, Ծիւղիկ, Հաւատ, Ամիրայ, Նորեկ, Սին, Մարազ, Սի-
սակ, Սեղորոս, Կիւիզոն, Փամփուշտ, Պաղ-Աղբիւր, Գրիշ 2-ին ք.
ՄԷՊԻՏԻՒ Խմբի հանդ. — Արտաշատ, Շաւարշ, Սէւն, Սե-
րոբեան, Մուրմանդակ, Արտաշէս, Մամանիս, Հայկունի 5-ին ք.
Թաթուլ 4 ք, Թմիլուկ, Եզնիկ 3-ին ք, Աշոտ, Տ. Լուսին, Թուլ
Կապար, Ազնիւ, Սոխակ, Առիւծ, Ծանթ, Վիշապ, Նազարեան
2 և ք, Արշակ 1 ք.

ԿՈՍԱԿԵՐԹԵԱՆԱ ԿԵՐՈՆԱԿԱՆ գանձարանում
ստացուել են հետեւեալ գումարները.

ՔԵՐՕՍԵՐՇԵՐ Մ-դից	-	-	-	500 ֆ.
«ԴԱՆՈՒՐ»	"	-	-	1100 ֆ.
ԲՐԱՅԼԱՅԻ	"	-	-	300 ֆ.
ԿԱԼԱՅԻ	"	-	-	100 ֆ.
ՌԱՇՏԻ	"	-	-	200 ֆ.
ՏԵԼՐՈՒ	"	-	-	50 տու.
ՍԵՆԱՍՏԱՊՈԼԻ	"	Կ.ի ծեղրով	-	100 ք.
ԻՍԹ ՍԵՆԹ ԼՈՒԻՉ	"	-	-	20 ոսկի
Բուրբէշի	"	-	-	138 ֆ.
ԷՆՋԵԼԻ	"	-	-	168 ֆ.

Պարամ, մանգատ և այլն ուղարկել հետեւեալ
Հասցեով.

M. BELLART, 7, Rue Campagne-Première 7,
(France) PARIS.

Imprimeur-Gérant Gabriel FARJAT.
7, Rue Campagne Première, PARIS

Imprimerie Spéciale du « HENTCHAK »